Հայոց ազգի հնագոյն աւանդութիւնը այսպէս է պատմում Հայաստանի ծագման մասին։ Յաբեթի թոռներից մէկը, Հայկ անունով, հաւաքում է իր որդիներին և թոռներին, թուով մօտ երեք հարիւր հոգի, և Բաբելոնի կողմերից դիմում է Արարատեան երկիրը և մի բարձր դաշտավայրի վրայ հաստատում իր բնակութիւնը։ Այն երկիրը, ուր առաջին անգամ ոտք դրեց Հայկը իր տնով ու տեղով՝ կոչուեց Հարք։ Ճանապարհին Հայկը նուաճում էր բոլոր ցեղերին, շատերն էլ ինքնակամ հնազանդում էին նրան, և այսպէս նա ընդարձակում էր իր երկիրը։

Երբ այս մասին լսեց Բաբելոնի Բէլ կամ Նուն անով պետը՝ պատգամ ուղարկեց նրան, ասելով, — բնակեցար սառնամանիքի մէջ. լաւ կանես, որ քո հպարտութիւնը մեղմացնես և գաս հանդիստ ապրես իմ ընդարձակ տէրութեան մէջ, ուր որ կամենաս»։ Հայկը խիստ պատասխանով յետ դարձրեց պատգամաւորներին Բաբելոն։ Զայրացաւ Բէլը Հայկի դիմադարձութեան վրայ, ժողովեց իր խառնիճաղանճ զօրքը և գնաց զէնքով հնազանդեցնելու նրան։ Այս որ

Հայոց ազգը — армянскій народъ: *Հայոց* — род. над. множ. числа древняго склоненія (нач. *Հայ*); въ настоящее время эта форма имѣетъ значеніе прилагательнаго (ср· *յունաց թագաւորը* — греческій король; *ռուսաց լեզու* — русскій языкъ и т. д.).—*Հնագոյն* — древнѣйшій (начало—*հին*) см. § 8, II, 2.—*Անունով* - по имени.—*Մօտ երեք հարիւր հոգի* — около трехъ сотъ *ծայր* количественное числит. употребляется какъ прилагательное и не вліяетъ на опредѣляемое существительное.—*Տնով ու տեղով* — со всѣмъ имуществомъ.—*Որ... գաս... ապրես* — наст. сослагат, имѣющее значеніе условія (хорошо сдѣлаешь, если умѣришь свою гордость и придешь, поселишься...).

լսեց Հայկը՝ ժողովեց իր սակաւաթիւ ցեղը և աներկիւղ՝ թշնամու առաջ գնաց։ Հասնելով մի ծովակի, որի ջուրը աղի է՝ քիչ կանգ առաւ, իր զունդը կարգաւորեց և յորդորեց, որ քաջութեամբ կռուեն, որպէս զի կամ յաղթեն և ստրկութիւնից ազատ մնան, կամ մեռնեն և միայն այս կերպով բռնաւորը իրենց ստացուածքին և երկրին տէր լինի։ Երկու կողմը միմեանց պատահեցին մի դաշտում, որ շրջապատուած էր բարձր լեռներով, և կատաղաբար յարձակուեցին միմեանց վրայ։ Հայց երկու կողմն էլ անպարտելի մնացին։ Այս անակընկալ դիպուածից զարհուրած՝ Բէլը մտածեց յետ քաշուել, մինչև որ իր բոլոր բազմութիւնը հասնէ և նորից պատերազմ սկսէ։ Այս միջոցին Հայկը, որ միայն իր ցեղի ազատութիւնն էր աչքի առաջ՝ մօտեցաւ Բաբելոնեան հսկային և իր նետը հասցրեց նրա դահապատ կուրծքին. բռնաւորն ընկաւ անկենդան, և նրա զօրքը ցիր ու ցան եղաւ։ Սրանից յետոյ Հայկ իր իրեններով վերադարձաւ Հարք, ուր Բէլի մարմինը մի բարձր առղ թաղել տուեց, որ ապագայ սերունդները միշտ աչքի առաջ ունենան իր քաջութեան գործը։

Ահա այս կերպով սկիզբ առաւ այն ազգութիւնը, որ իր տոհմապետի անունով կոչուեց Հայ, իսկ երկիրը Հայաստան կամ Հայոց աշխարհ։

Հայ,-ի—армянинъ.
Հայոց—армянскій.
ազգ,-ի—нація, народъ.
հին—старый, древній.
աւանդութիւն—легенда.
այսպէս—такъ, такимъ образомъ.
Հայաստան,-ի—Арменія.
Ծագում,-ի и *-գման*—происхожденіе.
Յաբեթ,-ի—Іафетъ.
Թոռ,-ի,-ներ—внукъ.
Հայկ,-ի—Г'айкъ.

Զայրացաւ—разгнѣвался, разсердился (нач. *զայրանալ*—§ 16, II, 1).—*Քաջութեամբ*—храбро—инструм. падежъ съ древнимъ окончаніемъ, (нач. *քաջութիւն*); съ окончаніемъ *թեամբ* весьма часто изъ существительныхъ образуются нарѣчія (въ предложеніи обст. обр. дѣйствія).—*Միմեանց վրայ*—другъ на друга (*միմեանց* соотносит. мѣстоим.—см. § 10, 7).—*Իրեններով*—со своими (людьми); *իրենը*—притяжат. мѣстоименіе, употребленное въ смыслѣ существительнаго (§ 10, 3).—*Թաղել տուեց*—велѣлъ похоронить.

անուն, ուան и -ի—имя.
հաւաքել—собирать.
որդի—сынъ.
թիւ, թուի, թուեր—число.
մօտ—около, съ.
հոգի,—душа.
երեք հարիւր—триста.
Բաբելոն,-ի—Вавилонъ.
դիմել—направляться.
Արարատեան—Араратскій.
երկիր,-կրի—страна, земля.
դաշտավայր,-ի—равнина.
հաստատել—утвердить, основать.
բնակութիւն—жилье, житье.
ուր—гдѣ.
առաջին—первый.
ոտք,-ի—нога; ·դնել—вступить (ногой).
կոչել—звать, называть.
Հարք—Г'арк'ъ.
նուաճել—покорять.
ցեղ,-ի—родъ.
շատերը—многіе.
ինքնակամ—добровольно.
հնազանդել—покоряться.
ընդարձակել—расширить.
Բէլ,-ի—Бэлъ.
կամ—или.
Ներրովթ,-ի—Нимротъ.
պետ,-ի—вождь, глава.
պատգամ,-ի—посланіе.
սառնամանիք,-ի—стужа; холодная страна.
լաւ անել—поступать хорошо.
հպարտութիւն—гордость.
մեղմացնել—смягчить.
ընդարձակ—пространный.
տէրութիւն—государство.
ուր որ—гдѣ; гдѣ бы ни.
խիստ—строгій, суровый.
պատասխան,-ի—отвѣтъ.
յետ դարձնել—вернуть назадъ, возвратить.
պատգամաւոր,-ի—посланникъ.
զայրանալ—гнѣваться.
դիմադարձութիւն--сопротивленіе.
խառնիճաղանճ—сбродный, безпорядочный.
զօր.ք,-ի—войско.
զէն.ք,-ի—оружіе.
հնազանդեցնել—покорить, подчинить.
ժողովել—собрать.
սակաւաթիւ—малочисленный.
աներկիւղ—безбоязненный;-но.
թշնամի—врагъ, непріятель.
առաջ—предъ; впредъ.
հասնել—достичь, дойти.
Ծովակ,-ի—маленькое море, озеро.
աղի—соленый.
քիչ—немного.
կանգ առնել—пріостановиться.
գունդ, գնդի—отрядъ, войско.
կարգաւորել—приводить въ порядокъ.
յորդորել—побуждать.
քաջութեամբ—храбро.
կռուել—драться.
որպէսզի—чтобы.
ստրկութիւն—рабство.
մեռնել—умереть.
կերպ,-ի—способъ, образъ.
բռնաւոր,-ի—тиранъ.
ստացուած.ք,-ի—имущество.

տէր, տիրոջ—господинъ, хозяинъ.
պատահել—встрѣчать,—ся.
դաշտ,-ի—поле.
շրջապատել—окружить.
լեռ,-լ,-ներ—гора.
կատաղաբար—бѣшено.
յարձակուել—броситься, напасть.
անպարտելի—непобѣдимый.
անակնկալ—неожиданный.
դիպուած,-ի—случай, совпаденіе.
զարհուրել—ужаснуться.
յետ քաշուել—отступить.
բազմութիւն—множество, толпа.
պատերազմ,-ի—война.
միջոց,-ի—промежутокъ (времени), моментъ.
ազատութիւն—свобода.
ունենալ աչքի առաջ—имѣть въ виду.
բաբելոնեան—вавилонскій.
նետ,-ի—стрѣла.
նետը հասցնել—поразить стрѣлой.
զրահապատ—покрытый доспѣхами.
կուրծք,-ի—грудь.
ընկնել—пасть.
անկենդան—безжизненно.
ցիր ու ցան—разсѣянный разбросанный; —լինել—разсѣяться.
մարմին,-մնի—тѣло.
թաղել—хоронить.
ապագայ—послѣдующій,грядущій
սերունդ,-ի—поколѣніе,потомство
քաջութիւն—храбрость.
սկիզբ, սկզբի—начало.
ազգութիւն—нація, національность.
տոհմապետ,-ի—родоначальникъ.
աշխարհ,-—земля, страна.

II.

Հայկի յաջորդները հետզհետէ սկսեցին աճող ժողովրդի պիտոյքները լրացնել, ընդարձակելով իրենց երկիրը դէպի Հիւսիս: Ճանաչելով մէկ ընդհանուր նահապետի գերիշխանութիւնը՝ ամեն ցեղ իր ցեղապետի անմիջական իշխանութեան տակ էր գտնւում: Հետզհետէ տարածուելով՝ հայերը սկսեցին Հարևան ազգերի ու ժողովուրդների հետ շփուել և ընդհարուել: Հարևան ցեղերը՝ արևելքից Մարացիք, Հարաւից Ասորեստանցիք և արևմուտքից Կասպատովկացիք, սկսեցին Հայկի երկիրը ոտնակոխ անել: Հարկաւոր էր մի անձ, որ ժողովէր ե-

---

ընդարձակելով—расширяя; ճանաչելով—признавая; оба инстр. пад. неопред. наклоненія, которое, какъ существит. форма глагола, имѣетъ полное склоненіе (по образцу II ск. род. ընդարձակելու, отд. ընդարձակելուց, мн. ընդարձակելները и т. д.). По русски этимъ формамъ соотвѣтствуютъ отглагольныя существительныя и нарѣчія.

կրի ներքին զօրութիւններն և հարևանների ասպատակութիւնների առաջն առնէր: Այս բախտը վիճակուեց Արամ նահապետին:

Արամի առաջին գործն եղաւ Հայաստանի այլ և այլ ցեղապետներին հաւաքել իր դրօշակի և իշխանութեան տակ: Այս ցեղապետների օգնութիւնով Հայաստանի զանազան կողմերից ժողովեց յիսուն հազար քաջ երիտասարդներ, որոնք մինչև այն ժամանակ իրենց նետ ու աղեղը միայն որսորդութեան մէջ էին գործ դրել:

Առաջ Արամը իր զօրութիւնը ուղղեց Նիւքար Մադէս պատերազմասէր Մարի դէմ, որ Հայաստանի արևելեան սահմանները ասպատակել և ժողովրդի վրայ հարկ էր դրել: Արամը դիշերով յանկարծակի յարձակուեց Նիւքարի վրայ, նրա զօրքը ջարդեց, իրեն էլ բռնեց, Արմաւիր բերեց և սպրսպի մի բարձր աշտարակի վրայից ոդ-ոդ ճակատին երկաթէ ցից խփել տուեց, որպէսզի Հայաստանի թշնամիները տեսնեն և խրատուեն: Իսկ Նիւքարի կալուածների վրայ հարկ դրեց:

Սրանից յետոյ Արամը իր զօրքով գնաց հարաւային կողմերը, ուր Բարշամ անունով ասորի իշխանը բռնանալով՝ շատ էր նեղացնում հայերին: Արամը նրա եաւիից ընկնելով՝ զօրքը ցրուեց և մինչև Ասորեստանի լեռները փախցրեց, ուր Բարշամը Արամի դինակիրներին պատահելով՝ սպանուեց նրանցից: Արամը նրա երկիրների մեծ մասի վրայ էլ հարկ դրեց:

Երբ այսպէս արևելեան և հարաւային կողմերից իր հայրենիքը ապահովեց՝ Արամը իր ուշքը դարձրեց արևմտեան սահմանների վրայ և մի մխիթ յղացաւ—Հայաստանի սահմանները այս կողմից ընդարձակել, որով հայ ժողովուրդը երկու

Յիսուն հազար երիտասարդներ—50,000 юношей.—Գիշերով—ночнымъ временемъ, ночью.—Ասպատակել, հարկ էր դրել—давнопрошедшія времена; при первомъ глаголѣ подразумѣвается էր: —Ողջ ողջ—заживо.—Խփել տուեց—велѣлъ прибить.—Փախցրեց—обратилъ въ бѣгство, прогналъ (нач. փախցնել—§ 16, II, 4). Սպանուեց նրանցից—былъ убитъ имъ: при стадат. залогѣ дѣйст. лицо ставится въ отлож. падежѣ.

մեծ ծովերի պիտի մօտենար, Պոնտոսին (Սև ծով) և Միջերկրականին: Այս ծովերի մէջ եղած տարածութիւնը, որ յետոյ Փոքր Ասիա կոչուեց՝ բռնուած էր զանազան ցեղերով, որոնց մէջ նշանաւոր էին Կապադովկացիք, Պայապիս անունով զօրաւոր իշխանի առաջնորդութեան տակ: Պայապիսն Արամի դիտաւորութիւնը զուշակելով՝ մեծ պատրաստութիւնով մօտեցաւ Հայոց սահմաններին: Արամը քառասուն հազար հետևակ և երկու հազար ձիաւոր զօրքով յարձակուեց նրա վրայ, յաղթեց նրան ու Միջերկրական ծովի կղզիներից մէկը փախցրեց:

Այս երևելի իշխանը առաջին անգամ ստիպեց Հայերին՝ ցեղական կեանքից հրաժարուել, և երկրի ներքին զօրութիւնները կենդրոնացնելով՝ մի պատկառելի տէրութիւն կազմեց, որով ոչ միայն իր հարեևնիքը օտարական ասպատակութիւններից ազատեց, այլ և նրա սահմաններն ընդարձակեց: Իր տիրապետած երկրի անբնակ ու ամայի տեղերը զաղթական ժողովուրդներով լցրեց, կարգաւորեց ու շէնացրեց: Հայերը շրջակայ թշնամիների յարձակումներից ապահովուած՝ սկսեցին յարաբերութիւններ կապել՝ արևելքից Մարացոց հետ, հարաւից Ասորեստանցոց ու Բաբելացոց հետ, իսկ արևմտեան կողմից Փոքր Ասիայի ժողովուրդների հետ: Սրանից բնականաբար պէտք է առաջանար զործունէութիւն երկրի մշակման մէջ և վաճառականական հաղորդակցութիւններ դրացի ազգերի հետ. այնպէս որ Ասիայի ազգերը Արամի օրերում սկսեցին ճանաչել Հայերին և այս նահապետի անունով Հայոց երկիրը Արմենիա կոչեցին, իսկ ազգն—Արմէն:

Յաջորդ,-ի—преемникъ.
հետզհետէ—постепенно.
աճել—расти.
պիտոյք,-ի—потребность, нужда.
լրացնել—пополнить, удовлетворить.
հիւսիս,-ի—сѣверъ.
ճանաչել—знать; признать.

Մօտեցաւ—прош. сослагат. (приближался бы къ двумъ морямъ).—Լցրեց—пополнилъ, поселилъ (нач. լցնել).—Բնականաբար—естественно (производное нарѣчіе отъ прилагат. բնական).—Արամի օրերում—въ дни, въ вѣкъ Арама.

Նահապետ,-ի—родоначальникъ племени, патріархъ.
ընդհանուր—всеобщій, общій.
գերիշխանութիւն—верховенство.
տոհմ,-ի—родъ, колѣно.
ցեղապետ,-ի—глава рода, родоначальникъ.
անմիջական—непосредственный.
իշխանութիւն-господство, власть.
գտնուել—находиться.
տարածուել—распространяться.
հարևան—сосѣдній; сосѣдъ.
շփուել—соприкасаться.
ընդհարուել—сталкиваться.
արևելք,-ի—востокъ.
մարացի или մար—мидіецъ (курдъ).
հարաւ,-ի—югъ.
ասորեստանցի—ассирянинъ.
արևմուտք—западъ.
կապադովկացի—каппадокіецъ.
ոտնակոխ անել—топтать ногами, разорять.
անձ,-ի—лицо, личность.
ներքին—внутренній.
զօրութիւն—сила.
ասպատակութիւն—набѣгъ.
առաջն առնել—пресѣчь, предупредить.
բախտ,-ի—счастіе.
վիճակուել—выпасть на долю, достаться.
այլևայլ—разный.
դրօշակ,-ի—знамя.
զանազան—различный.
յիսուն հազար—пятьдесятъ тысячъ
քաջ—храбрый.
երիտասարդ,-ի—молодой человѣкъ, юноша.
ժամանակ—время.
նետ,-ի—стрѣла.
աղեղ—лукъ.
որսորդութիւն—охота.
գործ դնել—употреблять.
առաջ—сперва, прежде.
ուղղել—направить.
Նիւքար Մադէս,-ի—Нюк'аръ Мадесъ.
պատերազմասէր—воинственный.
սահման,-ի—граница, предѣлъ.
ասպատակել—дѣлать набѣгъ.
հարկ,-ի—дань, подать; —դնել—наложить дань.
գիշեր, -ուայ—ночь; գիշերով—ночью.
յանկարծակի—внезапно.
ջարդել—рубить, истребить.
բռնել—схватить, ловить.
Արմաւիր,-ի—Армавиръ (городъ).
բերել—привести, принести.
պարիսպ,-րսպի—городская стѣна, ограда.
աշտարակ,-ի—башня.
ողջ—живой; ողջ-ողջ—заживо, живымъ.
ճակատ,-ի—лобъ.
երկաթէ—желѣзный.
ցից, ցցի—колъ.
խփել—бить, вбить.
խրատուել—научиться.
կալուած,-ի—владѣніе, помѣстіе.
հարաւային—южный.
Բարշամ,-ի—Баршамъ.
ասորի—сирійскій; сиріецъ.
իշխան,-ի—князь, правитель.

բռնանալ—тиранить.
նեղացնել—тѣснять, протѣснять.
ետևից ընկնել—гнаться за кѣмъ, преслѣдовать.
ցրուել—разсѣять.
փախցնել—обратить въ бѣгство.
զինակիր,-կրի - оруженосецъ.
պատահել—встрѣчаться.
սպանել—убить.
մաս,-ի—часть.
արևելեան—восточный.
հայրենիք,-ի—отечество.
ապահովել—обезопасить.
ուշք,-ի—вниманіе.
միտք, մտքի—мысль.
յղանալ—беременѣть.
միտք յղանալ—возымѣть мысль.
երկու—два.
Պոնտոս,-ի—Понтъ.
Միջերկրական (ծով)—Средиземное море.
տարածութիւն—пространство.
Փոքր Ասիա—Малая Азія.
կոչուել—называться.
բռնել—держать; занимать.
նշանաւոր—замѣчательный.
Պայապիս—Пайанисъ.
զօրաւոր—сильный, могущественный.
առաջնորդութիւն—предводительство.
դիտաւորութիւն—замыселъ, намѣреніе.
գուշակել—предугадать.
պատրաստութիւն—подготовка, приготовленіе.
հետևակ—пѣшій.
ձիաւոր—конный, верховой.
կղզի—островъ.
երևելի—знаменитый.
առաջին անգամ—въ первый разъ.
ստիպել—заставить, принудить.
ցեղական—родовой.
կեանք,-ի—жизнь; бытъ.
ցեղական կեանք—родовой бытъ.
հրաժարուել—отказаться.
կենդրոնացնել—сосредоточить.
պատկառելի—почтенный; значительный, сильный.
կազմել—образовать.
օտարական—чужестранный, чужеземный.
տիրապետել—завоевать.
անբնակ—ненаселенный, необитаемый.
ամայի—пустинный.
բնիկ—коренной.
գաղթական—переселенческій;—ժողովուրդ (-վրդի)—переселенецъ.
լցնել—наполнить.
կարգաւորել—устроить, упорядочить.
շէնացնել—сдѣлать оживленнымъ, населеннымъ.
շրջակայ—окрестный, окружающій.
յարձակում—набѣгъ, нападеніе.
կապել—связать.
յարաբերութիւն—сношеніе;—ներ կապել—завязать сношенія.
բաբելացի—вавилонецъ.
բնականաբար—естественно.
առաջանալ—возникать.

գործունէութիւն —дѣятельность.
մշակում,-կման —обработка, культура.
վաճառականական —торговый, коммерческій.
հաղորդակցութիւն—сношеніе.
դրացի —сосѣдній.
այնպէս որ—такъ что.
ճանաչել—знать, знакомиться.
Արմենիա,-այի—Арменія.
Արմէն,-ի—Армянинъ.

III.

Արամին յաջորդեց նրա որդին Արա գեղեցիկ: Ասորեստանի Շամիրամ թագուհին վաղուց լսած լինելով Արայի գեղեցկութիւնը՝ իր ամուսին Նինոսի մահից յետոյ կամեցաւ նրա հետ ամուսնանալ: Մարդիկ ուղարկեց նրան մեծամեծ ընծաներով և խոստացաւ, որ եթէ իր կամքը կատարէ՝ Հայաստանի հետ Ասորեստանի վրայ էլ կը թագաւորեցնէ նրան: Արա գեղեցիկը, որ ամուսնացած էր Նուարդ իշխանուհու հետ՝ մերժեց Ասորեստանի թագուհու առաջարկութիւնը: Շամիրամը զայրացած՝ մեծ զօրքով եկաւ Հայաստան, որպէս զի բռնի ստիպէ Արային իր առաջարկութիւնն ընդունել: Պատերազմից առաջ թագուհին հրամայեց իր զօրավարներին, որ աշխատեն Հայոց իշխանին չսպանել, այլ ողջ բռնեն և իր մօտ բերեն: Բայց Արան իր զօրքի յաղթութիւնը տեսնելով՝ դիւցազնաբար ընկաւ խառնուրդի մէջ և իր ոգեչախտութեան զոհ գնաց: Այն դաշտը, որ ներկուեց առաքինի նահապետի անունով՝ կոչուեց Արարատեան դաշտ, որ յետոյ ամբողջ նահանգի վրայ փոխուեց:

Պատերազմից յետոյ Շամիրամը մարդիկ ուղարկեց, որ դիակների միջից Արայի մարմինը գտնեն, և մի բարձր տեղ դնել

Գեղեցիկ—прекрасный, красивый: эпитеты ставятся позади (какъ по-русски Іоаннъ Грозный, Владиміръ Мономахъ).—Լսած լինելով—неопр. наклон. описат. спряженія (см. стр. 38).—Ամուսնացած (-ցել) էր—былъ уже женатъ (давнопр.).—Եկաւ (գալ)—прибылъ.—Որ աշխատեն—чтобы постарались.—Տեսնելով իր զօրքի յաղթուելը—увидѣвъ пораженіе своего войска.—Նահանգի վրայ փոխուեց—передалось, перешло на всю область.

տուեց, ցանկալով կախարդութիւնով կենդանացնել նրան. բայց երբ դիակը սկսեց հոտել՝ հրամայեց ծածուկ մի փոսի մէջ թաղել: Հայերը իրենց սիրելի իշխանի մահի վրայ գրգռուած՝ նորից զէնք առան և կամեցան պատերազմը շարունակել: Թագուհին հետևեալ հնարքը գործ դրեց նրանց հանդարտեցնելու համար: Իր սիրելիներից մէկին Արայի զգեստները հագցրեց և հեռուից հայերին ցոյց տալով՝ հաւատացրեց նրանց, թէ աստուածները Արայի վէրքերը լիզելով՝ կենդանութիւն տուին նրան:

Պատմուում է, թէ Շամիրամը Հայոց աշխարհում կամեցաւ իր մեծագործութեան հետքը թողնել, և վանից ծովի արևելեան ափի վրայ մի հոյակապ քաղաք և ամարանոց շինելով՝ իր անունով կոչեց Շամիրամակերտ (այժմեան Վան քաղաքը): Շամիրամն իր Համանուն Շամիրամակերտ քաղաքը շինելու համար ճարտարապետներ չը գտնելով Հայոց երկրում՝ վեց հազար ճարտարապետ ու երևելի արուեստագէտ և տասնեվեց հազար գործաւոր բերել տուեց Ասորեստանից և ուրիշ երկրներից, որոնք մի քանի տարի գործ դրին այն հրաշակերտ քաղաքը շինելու: Քաղաքը զարդարուած էր երկյարկանի և երեքյարկանի պալատներով և չքնաղ բաղանիներով, տեսակ-տեսակ և գոյնզգոյն քարերից շինուած: Նշանաւոր էին մանաւանդ ապառաժի մէջ փորուած ահագին սենեակներն ու սրահները: Ամբողջ քաղաքաբլուրը, որի վրայ այժմ էլ կանգուն մնացած է Վանի հռչակաւոր բերդը՝ ծածկուած է սեպաձև արձանագրութիւններով:

Յաջորդել —наслѣдовать (престолъ)
գեղեցկութիւն—красота.
ամուսին,-սնի—супругъ, супруга.
Նինոս,-ի—Нинъ.
ամուսնանալ—вступить въ супружество.

Զէնք առան—взялись за оружіе.—Պատմուում է—разсказывается.—Մեծագործութեան հետք—слѣдъ великихъ подвиговъ, дѣяній.—Շամիրամակերտ—буквально: построенный (կերտ, կերտել) Семирамидой.—Գործ դրին (դնել)—употребили.

մեծամեծ—очень большой, громадный (про многихъ).
ընծայ,-ի—подарокъ.
խոստանալ—обѣщать.
կամք,-ի—воля, желаніе.
կատարել—исполнить.
թագաւորեցնել—возвести въ царство, воцарить.
Նուարդ,-ի—Нвардъ.
մերժել—отвергнуть, отклонить.
առաջարկութիւն—предложеніе.
բռնի—насильственно,-льно.
ընդունել—принять.
հրամայել—приказать.
զօրավար,-ի—воевода, полководецъ
աշխատել—стараться.
ողջ—живой.
դիւցազնաբար—геройски.
խառնուրդ,-ի—смятеніе.
ողջախոհութիւն—цѣломудріе.
զոհ,-ի—жертва.
զոհ գնալ—сдѣлаться жертвой.
ներկուել—быть окрашеннымъ, окраситься.
առատին—доблестный.
Արարատեան—Араратскій.
փոխուել—перемѣниться;перейти.
դիակ,-ի—трупъ.
գտնել—розыскать, найти.
դնել տալ—велѣть поставить.
ցանկալ—желать.
կախարդութիւն—чародѣйство.
կենդանացնել—оживить.
հոտել—гнить.
ծածուկ—секретный, тайный; тайно.
փոս,-ի—яма.
թաղել—зарыть; хоронить.
սիրելի—любимый.
գրգռուել—раздражаться; побуждаться.
շարունակել—продолжать.
հետևեալ—слѣдующій.
հնարք,-ի—выдумка; хитрость.
հանդարտեցնել—успокоить.
սիրելի,-լիի—любимецъ.
զգեստ,-ի—одежда.
հագցնել—одѣвать.
հեռուից—издали.
հատատացնել—увѣрять.
վէրք,-ի—рана.
լիզել—лизать.
կենդանութիւն—жизнь;—տալ оживить.
մեծագործութիւն—великое дѣло; подвигъ.
Վան,-ի—Ванъ (городъ).
հոյակապ—грандіозный, величественный.
ամարանոց—лѣтняя резиденція; дача, вилла.
Ծամիրամակերտ,-ի—Шамирамакертъ.
այժմեան—теперешній.
համանուն—соименный, одноименный.
հարկաւոր—нужный.
ճարտարապետ,-ի—архитекторъ.
երևելի—замѣчательный, извѣстный.
արուեստագէտ—мастеръ, артистъ.
գործաւոր—рабочій, ремесленникъ.

հրաշակերտ—чудный, чудесный.
զարդարուել—украситься.
երկյարկանի—двухъэтажный.
երեքյարկանի—трехъэтажный.
չքնաղ—безподобный, прелестный.
բաղանիք,-ի—баня.
տեսակ-տեսակ—разнообразный.
գոյնզգոյն—разноцвѣтный.
քար,-ի—камень.
շինել—выстроить.
ապառաժ,-ի—скала.
փորել—копать; вырѣзать; высѣкать.
ամբողջ—весь, цѣлый.
քարաբլուր—каменный холмъ.
այժմ—теперь.
կանգուն—стойкій.
կանգուն մնալ—уцѣлѣть, устоять.
հռչակաւոր—знаменитый.
բերդ,-ի—крѣпость.
ծածկել—покрыть.
սեպաձև—клинообразный.
արձանագրութիւն—надпись.

IV.

Հայերի առաջին պսակակիր թագաւոր պատմական աւանդութիւնը համարում է Պարոյր իշխանին, որ Քարաց Կիաքսար Ա. և Բաբելոնի Նաբուպալասար իշխանների հետ նիհուէ մայրաքաղաքն առան և Ասորեստանը կործանեցին: Այս յաղթութիւնների պատճառով նա իր դաշնակիցներից թագ ստացաւ: Բայց Հայկի տոհմից ամենանշանաւորը համարւում է Տիգրան առաջինը, որին երգիչները նկարագրում են իբրև մարմնով յաղթանդամ, զուարթերես ու քաղցրահայեաց, կեր ու խումի ժամանակ պարկեշտ, ցանկութիւնների մէջ չափաւոր, լմաստուն ու պերճախօս և ամեն բանի պիտանի: Արդարադատ ու հաւասարասէր լինելով՝ նա ոչ յաւերի վրայ էր նախանձում և ոչ նուաստներին արհամարհում, այլ ամենի վրայ անխտիր տարածում էր իր խնամքը:

Իր երկրի պայծառութեան վրայ հոգ տանելով՝ Տիգրանը առանձին ուշք դարձրեց զօրքի բարեկարգութեան

Պսակակիր թագաւոր—коронованный, вѣнценосный царь.—Յաղթութիւնների պատճառով—по причинѣ, вслѣдствіе побѣдъ.—Կեր ու խում—ѣда и питье, пиршество; կեր ու խումի ժամանակ—во время пиршествъ, за пиромъ.—Հոգ տանել—заботиться.—Ուշք դարձնել—обратить вниманіе.

էր, բազմացրեց ու կարգաւորեց, իսկ հետևակ զօրքը կրթեց և ամենի ձեռքը սուր, տէգ ու նիզակ տուեց: Այն զօրքը, որ մինչև այն ժամանակ աղեղ ու պարսաքար բանեցնելով էր պատերազմում՝ այժմ վահանով ու երկաթէ զրահներով էր պատսպարւում: Այս զինական յաջողութիւնների արդիւնքն եղաւ երկրի քաղաքական կարգերի յառաջադիմութիւնը և վաճառականութեան բարգաւաճումը:

Պսակակիր—вѣнценосный.
պատմական—историческій.
աւանդութիւն—преданіе.
Պարոյր,-ի—Паруйръ.
մասնակցել—участвовать.
Կլաքսար Ա.—Кіаксаръ I.
Նաբուպալասար,-ի—Набупаласаръ.
Նինուէ,-ի—Ниневія.
մայրաքաղաք—столица.
կործանել—разрушить.
յաղթութիւն—побѣда.
պատճառ,-ի—причина.
դաշնակից,-կցի—союзникъ.
թագ,-ի—корона.
տոհմ,-ի—родъ, династія.
համարուել—считаться.
Տիգրան,-ի—Тигранъ.
երդիչ,-գչի—пѣвецъ.
նկարագրել—живописать, описать.
իբրև—какъ.
յաղթանդամ—рослый.
զուարթերես—веселолицый.
քաղցրահայեաց—съ пріятнымъ взоромъ.
խում, խմի—попойка, питье.
կեր,-ի—ѣда, пища.
պարկեշտ—скромный, приличный.
ցանկութիւն—желаніе, страсть.
չափաւոր—умѣренный.
իմաստուն—мудрый.
պերճախօս—краснорѣчивый.
պիտանի—годный, нужный; способный.
արդարադատ—правосудный, справедливый.
հաւասարասէր—любящій равенство.
նախանձել—завидовать.
նուաստ—слабый, низкій.
անխտիր—безразличный; -но.
տարածել—простирать.
խնամք,-ի—попеченіе, забота.
պայծառութիւն—блескъ, слава.
հոգ,-ի—забота.
առանձին—особенный.
բարեկարգութիւն—благоустройство.
հեծելազօրք,-ի—конница.
աննշան—незначительный.
բազմացնել—умножить.
կրթել—воспитывать, обучать.
սուր, սրի—мечъ.
տէգ,-ի—дротикъ.

Զինական յաջողութիւն - успѣхъ оружія.

Նիզակ,-ի—копье.
աղեղ,-ի—лукъ.
պարսաքար—камень для пращи, праща.
բանեցնել—употреблять.
պատերազմել—воевать.
վահան,-ի—щитъ.
զրահ,-ի—доспѣхъ.
պատսպարուել—обороняться, прикрываться.
զինական—оружейный.
յաջողութիւն—успѣхъ.
արդիւնք,-ի—польза, выгода.
քաղաքային—гражданскій.
կարգ, ի—порядокъ, строй.
յառաջադիմութիւն—прогресъ, успѣхъ.
վաճառականութիւն—торговля.
բարգաւաճում,—развитіе; процвѣтаніе.

V.

Տիգրանին ժամանակակից էր Մարաց Աժդահակ թագաւորի Թոռ Կիւրոսը, որ իւր պապից թագաւորութիւնը խլելու գաղտնի միտք ունենալով՝ բարեկամական դաշն կապեց Տիգրանի հետ: Երկու իշխանների մտերմութիւնը կասկածի մէջ գցեց ներսունի Աժդահակին, այնպէս որ ցերեկը Հանդիստ և գիշերը քուն չունէր: Այս տագնապի մէջ եղած ժամանակ Աժդահակը մի զարհուրելի երազ էլ տեսաւ, որ նրա խռովութիւնը աւելի սաստկացրեց: Իբրև թէ Հայոց ձիւնապատ լեռներից մէկի գագաթին մի բարձրահասակ ու գեղեցիկ կին էր նստած, որ ծննդականութեան ցաւով բռնուելով՝ յանկարծ երեք չափահաս կտրիճներ ծնեց: Առաջինը առիւծի վրայ հեծաւ և արևմտեան կողմը դիմեց. երկրորդն ընծի վրայ նստած դէպի հիւսիս վազեց. իսկ երրորդը մի վիթխարի վիշապ սանձելով՝ Մարաց տէրութեան վրայ արշաւեց: Այս վերջինը հասնելով արքունի պալատի մօտ, ուր Աժդահակն իր աստուածներին զոհ էր մատուցանում՝ թռաւ

Գաղտնի միտք ունենալով - питая тайный замыселъ, имя тайное намѣреніе (отнять царство у дѣда).—Դաշն կապել - заключить союзъ.—Կասկածի մէջ գցել—ввергать въ подозрѣніе, возбудить подозрѣніе.—Ցաւով բռնուելով—одержимая (предродовой) болѣзнью.—Զոհ էր մատուցանում - совершалъ жертвоприношеніе.

տանիքի վրայ և կամենում էր կուռքերը կործանել: Թագաւորը մէջ մտաւ և կռուի բռնուեց այն կտրիճի հետ, բայց յաղթուեց և սպանուեց: Աժդահակը սարսափած զարթեց, գիշերով կանչեց իւր խորհրդականներին և տեսած երազը պատմելով համոզուեց, որ Հայոց Տիգրան Թագաւորի կողմից մեծ վտանգ է սպառնում իր տէրութեանը: Աժդահակը դեսպան ուղարկեց ընծաներով Հայոց Թագաւորին և խնդրեց, որ Տիգրանուհի քրոջն իրեն կնութեան տայ, յուսալով որ քրոջ ձեռքով հեշտութեամբ կը կարողանայ եղբօրը կործանել: Տիգրանը համաձայնեց և մեծ փառքով Տիգրանուհուն ուղարկեց Մարաց Թագաւորութեան Եկբատան մայրաքաղաքը: Աժդահակը իր քաղցր վարմունքով Տիգրանուհու հաւատարմութիւնը գրաւելուց յետոյ, սկսեց վառասիրութեան փափուկ լարերը շարժել նրա սրտում, որպէս թէ Տիգրանը իր Ջարուհի կնոջ վառասիրութիւնից դրգռուելով՝ կամենում է յափշտակել Մարաց Թագաւորութիւնը: Խորագէտ Տիգրանուհին լմացաւ Աժդահակի դաւաճանութիւնը. երեսանց հաւանութիւն ցոյց տուեց, բայց ծածուկ հաւատարիմ մարդու ձեռքով ամեն բան յայտնեց եղբօրը: Ուստի երբ Աժդահակը Հայոց Թագաւորին հրաւիրեց, որ երկու տէրութիւնների սահմանագլուխը գայ, իբրև թէ մի հարկաւոր գործի մասին խորհրդակցելու համար՝ Տիգրանը իր զօրքն առաւ և դնաց Մարաց վրայ: Տիգրանուհին յարմար միջոց գտաւ իր եղբօր մօտ փախչելու, և թշնամական յարաբերութիւնները սկսուեցին: Աժդահակն անձամբ դուրս եկաւ իր Թագը պաշտպանելու: Կռուի տաքացած ժամանակը, Տիգրանը իր նիզակի հար-

---

Մէջ մտնել—вмѣшаться.—Կռուի բռնուել—завязать бой, вступить въ схватку.—Կնութեան տալ—отдать въ жены, выдать замужъ.—Քաղցր վարմունքով—кроткимъ обхожденіемъ.—Հաւատարիմ մարդու ձեռքով—черезъ посредство вѣрнаго человѣка.—Թշնամական յարաբերութիւնները սկսեցին—начали враждебныя столкновенія.—Դուրս եկաւ—выступилъ.—Կռուի տաքացած ժամանակ—въ разгарѣ сраженія.

ուածով Աժդահակին սպանեց, որով և պատերազմը վերջացաւ: Մարաց Թագաւորութիւնն ընկաւ Կիւրոսին, որ Պարսկական հզօր պետութեան հիմքը դրեց: Իսկ Տիգրանը տասը հազարից աւելի գերիներ հանեց Մարաստանից, որոնց մէջ էին Աժդահակի առաջին կինն Անոյշ անունով, շատ արքայորդիները և արքայազն օրիորդները, և բերեց Մասիս սարի արևելեան կողմը բնակեցրեց: Տիգրանը իր քրոջ հաւատարմութիւնն արժանապէս վարձատրեց, պարգևելով նրան իր նորաշէն Տիգրանակերտ քաղաքը, և նոյն գաւառի եկամուտներն յատկացրեց նրան, որպէս զի արքայավայել կեանք վարէ:

Տիգրանը Կիւրոսին զորձակից և դաշնակից եղաւ նաև Լիւդացոց Կրեսոս Թագաւորի և ապա Բաբելացոց դէմ:

Ժամանակակից—современный.
Աժդահակ,-ի—Астіагъ.
Կիւրոս, ի—Киръ.
պապ,-ի—дѣдъ.
Թագաւորութիւն—царство.
խլել—отнять.
գաղտնի—тайный.
միտք, մտքի—цѣль, намѣреніе, умыселъ.
բարեկամական—дружескій,-жественный.
դաշն,-ի—союзъ.
մտերմութիւն—близость, интимность.
կասկած,-ի—подозрѣніе.
քուն, քնի—сонъ.
տագնապ,-ի—тревога, кризисъ, тревожное состояніе.
զարհուրելի—страшный.
երազ,-ի—сновидѣніе, сонъ.
խռովութիւն—безпокойство, смута.
սաստկացնել—усилить.
իբրև թէ—будто бы.
ձիւնապատ—покрытій снѣгомъ, снѣжный.
գագաթ,-ի—вершина.
բարձրահասակ—высокорослый, высокій.
ծննդականութիւն—роды.
ցաւ,-ի—болѣзнь, боль.
յանկարծ—вдругъ.
չափահաս—совершеннолѣтный, взрослый.
կտրիճ,-ի—храбрецъ, молодецъ, герой.
առիւծ,-ի—левъ.
հեծնել—сѣсть верхомъ.
ինձ, ընձի—барсъ.
վազել—бѣжать, по—.

Ընկաւ—пало (начало ընկնել)—§ 16, II, 2).—Հիմք դնել—положить основаніе, основать.—Գերիներ հանեց—вывелъ, увелъ плѣнниковъ.—Կեանք վարել—вести жизнь, жить.

երրորդ,—третій.
վիթխարի—громадный.
վիշապ,-ի—драконъ.
սանձել—надѣть узду; обуздать.
արշաւել—набѣгать, наброситься.
արքունի—царскій.
մատուցանել—подать; приносить.
տանիք,-ի—крыша.
կուռք,-ի—кумиръ, идолъ.
մտնել—войти.
կռիւ, կռուի—бой.
սարսափել—ужаснуться.
զարթել—просыпаться.
խորհրդական,-ի—совѣтникъ.
համոզուել—убѣдиться.
վտանգ,-ի—опасность.
սպառնալ—грозить, угрожать.
դեսպան,-ի—посолъ.
Տիգրանուհի—Тигрануи.
քոյր, քրոջ—сестра.
կնութիւն—супружество.
հեշտութեամբ—легко.
եղբայր,-բօր—братъ.
փառք,-ի—слава, почесть.
Եկբատան,-ի—Экбатана.
վարմունք,-ի—обхожденіе, поступокъ.
հաւատարմութիւն—довѣріе.
գրաւել—плѣнить, завлекать, пріобрѣсть.
փառասիրութիւն—честолюбіе.
փափուկ—мягкій, нѣжный.
լար,-ի—струна.
շարժել—трогать, двигать.
Զարուհի—Заруи.
գրգռել—подстрекать, побуждать.
յափշտակել—захватить, завладѣть.
խորագէտ—смышленный.
իմանալ—узнать.
դաւաճանութիւն—измѣна.
երեսանց—наружно.
հաւանութիւն—одобреніе.
հաւատարիմ—вѣрный.
յայտնել—объявить.
ուստի—по этому, потому.
հրաւիրել—пригласить.
սահմանագլուխ—пограничный пунктъ.
հարկաւոր—нужный.
խորհրդակցել—совѣщаться.
յարմար—удобный.
միջոց,-ի—моментъ; средство.
թշնամական—непріятельскій, вражескій.
յարաբերութիւն—сношеніе.
անձամբ—лично.
պաշտպանել—защищать.
տաքացած—разгоряченный.
հարուած,-ի—ударъ.
վերջանալ—кончиться.
պարսկական—персидскій.
հզօր—грозный, могущественный.
հիմք,-ի—основаніе.
գերի—узникъ, рабъ.
Անոյշ—Ануйшъ.
արքայորդի—царевичъ.
արքայազն,-ի—царскаго рода.
օրիորդ—дѣвица.
Մասիս,-ի—Масисъ(гора Араратъ).
բնակեցնել поселить.
հաւատարմութիւն—вѣрность, довѣріе.
արժանապէս—достойно.
վարձատրել—вознаградить.

պարգեւել—наградить, подарить.
նորաշէն—новопостроенный, новый.
Տիգրանակերտ,-ի—Тигранакертъ.
գաւառ,-ի—область.
եկամուտ,-ի—доходъ.
յատկացնել—удѣлить, опредѣлить.
արքայավայել—подобающій царю, по царски.
վարել—править, вести.
գործակից—соучастникъ.
լիւդացի—лидіецъ.
Կրեսոս,-ի—Крезъ.
ապա—потомъ.

Начало христіанства.

Դեռ Փրկիչն երկրի վրայ էր, որ Նրա առաջին քարոզութիւնները արձագանգ գտան Հայոց մէջ, և Աբգար Հայոց թագաւորը հեթանոս իշխանների մէջ առաջինն եղաւ, որ հաւատաց, թէ Նա Աստուծոյ Որդի է: Աբգարի դեսպանները Երուսաղէմ այցելելով՝ ականատես եղան Յիսուսի հրաշագործութիւններին և եկան լրանց տիրոջը պատմեցին: Թագաւորը, որ ծանր հիւանդ էր և չէր կարող բժշկուել՝ շտապեց իր հաւատարիմ Անանէ սուրհանդակի ձեռքով թուղթ ուղարկել Փրկչին, խնդրելով որ գայ իրեն բժշկէ և հրէաների հայհոյանքներից ազատուելու համար իր պալատում բնակի: Փրկիչը յանձնեց Թոմաս առաքեալին պատասխանել, թէ Ինքը պէտք է կատարէ այն ամենը՝ ինչի համար եկել է. իսկ Իր համբարձումից յետոյ աշակերտներից մէկը կը գայ և կը բժշկէ նրան: Թադէոս առաքեալին վիճակուեց գալ Եդեսիա, ուր բժշկեց Աբգարին, մկրտեց նրան իր պալատականներն և բոլոր Եդեսացոց հետ, և Աղդէ անունով պալատականին եպիսկոպոս ձեռնադրելով՝ իր տեղը թողեց և ինքը

---

1) Առաջինն եղաւ, որ հաւատաց—онъ (былъ) первый, (который) вѣровалъ.—Հրեայ, род. հրէայի, множ. ч. հրէաներ. Конечное нѣмое յ (см. § 2, 1) при склоненіи всегда исчезаетъ предъ согласнымъ.—Այն ամենը—все то.—Վիճակուեց—выпало на долю, досталось.—Իր տեղը թողեց—оставилъ вмѣсто себя.

Աբգարի հրովարտակով անցաւ Հայաստան քրիստոնէութիւնը քարոզելու:

Թադէոս առաքեալի (որին շուտով ընկերացաւ նաև Բարթուղիմէոս առաքեալը) աշխատութիւնով հիմնուեցին առաջին եկեղեցիները Հայոց աշխարհում: Բայց քրիստոնէութիւնը խորարմատ չը դրեց հեթանոս Հայերի մէջ. Աբգարից յետոյ նրա յաջորդները եկեղեցիները կործանեցին և մեհեանները կրկին բաց արին. հեթանոսութիւնը վերահաստատուեց իր բոլոր զօրութիւնով, և նրա առաջին զոհերն եղան Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալները:

Թէև հին կրօնը դեռ էլի երեք դար տևեց Հայերի մէջ՝ բայց և այնպէս քրիստոնէութիւնը բոլորովին չանհետացաւ Հայոց աշխարհից, այլ ծածուկ կերպով քարոզւում էր նրա բնակիչներին:

Այսպէս ուրեմն Թադէոսի և Բարթուղիմէոսի ցանած սերմերը քիչ-քիչ աճեցին և պատրաստեցին Հայոց ազգին լիովին քրիստոնէութիւն ընդունելու Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով:

Ս. Գրիգորը ծնուեց երկու Հարիւր յիսուն եօթը թուականին վաղարշապատ քաղաքում. նրա Հայրն էր Անակ Պարթևը: Երեք տարեկան՝ Գրիգորին իր Սոփիա ստնտուի Հետ տարան Կեսարիա: Այնտեղ մանուկը մկրտուեց և սնուեց քրիստոնէական հոգով, սովորելով յունարէն և ասորերէն լեզուներն և կրօնի վերաբերեալ գիտութիւնները: Երբ որ չափահաս դարձաւ՝ ամուսնացաւ Դաւիթ անունով յոյնի Մարիամ աղջկայ հետ, որից երկու որդի ունեցաւ, Վրթանէս և Արիստակէս: Երեք տարուց յետոյ Գրիգորը գնաց Հռոմ Հայոց Տրդատ արքայորդու մօտ:

Անցաւ Հայաստան – отправился въ Арменію.—Ընկերացաւ—(сдѣлался товарищемъ) присоединился.—Խոր արմատ չը դրեց—не пустилъ глубокихъ корней, неукоренился.—Բայց և այնպէս—но все таки, однакоже.—Հայոց աշխարհ—армянская земля=Арменія.—Ծածուկ կերպով—тайно.—Քիչ-քիչ—понемногу.—Երեք տարեկան—трехлѣтній.—Քրիստոնէական հոգով—въ духѣ христіанства.

Դեռ Հռոմ եղած ժամանակը Տրդատը յորդորում էր Գրիգորին քրիստոնէութիւնը թողնել. իսկ երբ Հռոմից Հայաստան եկաւ և Երիզայում Անահիտ դիցուհուն զոհ բերեց, իր Հայրենի Թագաւորութիւնը յաջողութիւնով վերադառնալուն համար՝ հրամայեց Գրիգորին, որ արքայական սեղանից ծաղկէ պսակներ առնէ և կանաչ ոստերի Հետ Ոսկեմօրը նուէր տանէ: Գրիգորը յանձն չառաւ Թագաւորի կամքը կատարել: Այն ժամանակ Տրդատը զանազան Հնարներով աշխատեց նրա միտքը փոխել, բայց ոչինչ չօգնեց: Գրիգորը անդրդուելի մնաց Թագաւորի քաղցր խօսքերի, սպառնալիքների և մինչև անգամ տանջանքների առաջ, որ շատ օրեր շարունակ տևեցին: Տրդատը յետոյ հրամայեց, որ տանեն գցեն նրան Արտաշատի Խոր-Վիրապը, ուր Հայաստանի ապագայ լուսաւորչին վիճակուած էր երկար տարիներ ողջ ու անվնաս մընալ. մի բարեպաշտ կին ամեն օր Հաց էր տալիս նրան և խնամում էր:

Տասնչորս տարի էր անցել Գրիգորին վիհը ձգուած օրից՝ երբ մի խումբ Հաւատաւոր կոյսեր Գայիանէի առաջնորդութեամբ Հռոմից փախչելով՝ եկան ապաւինեցին Հայաստան, բերելով իրենց Հետ մի կայսերազն օրիորդ, Հռիփսիմէ անունով, որին Գիոկղետիանոս կայսրը կամենում էր իրեն կին առնել: Նրանք իրենց բնակութիւնը Հաստատեցին Վաղարշապատի մօտ մի Հնձանի մէջ, ուր ծածուկ ապրում էին, կերակրուելով ապակեայ ուլունքների գը-

Հռոմ եղած ժամանակը—въ бытность его въ Римѣ.—Զոհ բերել—приносить жертву.—Յաջողութիւնով—съ успѣхомъ, успѣшно.—Ոսկեմայր,—мать—Золотая мать; это эпитетъ наиболѣе чтимой въ Арменіи богини Анаг'итъ.—Միտքը փոխել—разубѣдить; раздумать.—Վիհը ձգուած օրից—съ того дня, когда онъ былъ брошенъ въ яму.—Մի խումբ կոյսեր—(группа), нѣсколько дѣвицъ.—Առաջնորդութեամբ—подъ предводительствомъ.—Կայսերազն օրիորդ—дѣвица императорскаго рода. Կայսր, род. -ի. употребительна и древняя форма:կայսեր:—Կին առնել—жениться.—Բնակութիւնը հաստատեցին—поселились, устроили свое жилье.

նով, որ իրենց ընկերուհիներից մէկը շինում էր: Կայսրի կողմից ստացած թղթի հիման վրայ Տրդատը հրամայեց որոնել և գտնել կոյսերի ապաստանած տեղը: Հնձանը շրջապատուեց զինուորներով, և արքունի սպասաւորներ եկան Հռիփսիմէին թագաւորավայել զգեստներ հագցնելու և պալատը տանելու: Կոյսն ընդդիմացաւ, և քաշէքաշ բերուեց Տրդատի մօտ: Արդէն հարսանիքի հանդէսն սկսուել էր և ժողովրդի բազմութիւնը պալատի շուրջը խռնուել՝ երբ Հռիփսիմէն մի քանի ժամ Տրդատին հակառակելուց յետոյ սենեակից դուրս վախաւ, ամբոխը ճեղքեց և իր ընկերուհիների բնակարանն եկաւ: Հասան յետևից դահիճները, կապեցին նրան չորս ցցի վրայ, աչքերը հանեցին, մարմինը կտոր կտոր արին և այրեցին: Սրա հետ սպանուեցին երեսներեք հոգի: Հետևեալ օրը Գայիանէ կոյսը, որ բերուել էր պալատ Հռիփսիմէին համոզելու համար՝ սաստիկ տանջանքներով սպանուեց ուրիշ երկու ընկերուհիների հետ, որով ընդամենը նահատակուեցին երեսնեօթը հոգի:

Այս անմեղների մահուան վրայ Թագաւորի խիղճը սկսեց տանջել. մի տեսակ մելամաղձութիւն եկաւ վրան, և երբ մի քանի օր յետոյ իր իշխանների հետ որսի էր գնում՝ կառքից դուրս թռաւ և վայրի գազանների պէս թափառում էր անտառներում: Այդ միջոցին Տրդատի քոյր Խոսրովիդուխտը մի երազ տեսաւ. մի լուսազգեստ մարդ ասում էր նրան, թէ միայն Գրիգորը կարող է բժշկել Թագաւորին այդ աստուածային պատուհասից: Բայց ով կը հաւատար,

---

Հասան յետևից—погнались.—Աչքերը հանեցին—выкололи глаза.—Երեսներեք հոգի—тридцать три человѣка.—Послѣ колич. числительнаго обозначающаго болѣе двухъ, по армянски ставится безразлично единств. или множ. число (см. выше 50,000 երիտասարդներ):—Մահուան վրայ—относительно, по поводу смерти (у царя началось угрызеніе совѣсти); մահ, род. -ի и մահուան.—Մի տեսակ—какой-то, своеобразный.—Եկաւ վրան—напала на него (меланхолія).—Որսի գնալ—отправиться на охоту.—Դուրս թռաւ—выскочилъ.—Այդ միջոցին—въ эту минуту.—Կարող է—можетъ (нач. կարող լինել—мочь).

թէ այնքան տարի անցնելուց յետոյ՝ նա կենդանի մնացած կը լինի Վիրապում: Երբ երազը կրկնուեց՝ Օտա Ամատունին ուղարկուեց Սրտաշատ. մի պարան ցած թողին Վիրապի մէջ և Գրիգորին ձայն տուին. պարանը շարժուեց, և Աստծու նահատակը դուրս բերուեց այն մութ ու խոնաւ բնակարանից: Այս սքանչելիքը շուտով տարածուեց Հայոց աշխարհի մէջ: Վաղարշապատի ճանապարհի վրայ Ս. Գրիգորի առաջ եկաւ ախտացած Թագաւորն իր իշխանների հետ: Սուրբ Գրիգորը ծունկ չոգելով՝ աղօթեց նրանց համար, և նրանք փոքր ինչ թեթևութիւն զգացին: Յետոյ Հռիփսիմեան կոյսերի նահատակութեան տեղը գնալով՝ մարմինների մնացորդները ժողովեց, նրանց բնակած հնձանը տարաւ և իւրաքանչիւրին իր պատուոտուն հանդերձի մէջ պատելով՝ այնտեղ տեղաւորեց: Երկրորդ օրը Թագաւորը, նախարարները և երկրի բոլոր կողմերից հաւաքուած բազմութիւնը եկան Ս. Գրիգորի մօտ, որը համոզեց նրանց հեթանոսութիւնը թողնել և քրիստոնէական հաւատն ընդունել:

Այս նախապատրաստութիւնից յետոյ, որ երկու ամիս տեւեց, Ս. Գրիգորը նորահաւատ ժողովրդի օգնութիւնով ձեռնարկեց երեք վկայարան շինելու կոյսերի պատուի համար. մէկը Հռիփսիմէի նահատակուած տեղում, միւսը Գայիանէի, երրորդը կոյսերի բնակած տեղում: Մեծ էր ժողովրդի ցոյց տուած ջերմեռանդութիւնը այս աստուածահաճոյ գործի մէջ. ինքը Թագաւորը բահը ձեռքին՝ կոյսերի գերեզմանատեղերը փորում էր. իսկ Աշխէն Թագուհին և Խոսրովիդուխտը իրենց վէշերով հողը դուրս էին բերում: Սրանով չը բաւականանալով՝

Անցնելուց յետոյ—спустя, по прошествіи (стольких лѣтъ).—Մնացած լինի—чтобы остался (сослаг. наст. описат. спряженія).—Ցած թողին—опустили (внизъ).—Ձայն տալ—выкликать, вызвать.—Դուրս բերուեց—былъ вынесенъ, вытащенъ.—Ծունկ չոգելով—ставъ на колѣни; тоже ծունկ չոգել—(ծունկ плеоназмъ).—Հռիփսիմեան—Г'риспиміевъ; суфф. եան обозначаетъ фамилію.—Բահը ձեռքին—съ заступомъ въ рукѣ.—Դուրս էին բերում—выносили, вытаскивали.

Տրդատը եօթն օրուայ ճանապարհ գնաց, Մասիսի վրայ բարձրացաւ և այնտեղից ուղիղ խոշոր քարեր բերեց Հռիփսիմէի վկայարանի շեմքում կանգնեցնելու:

Այնուհետև Տրդատը Ս. Գրիգորի հետ սկսեց շրջել Հայաստանի ամեն կողմերը: Թագաւորը ամենին յորդորում ու ստիպում էր հրաժարուել հին կրօնի սնոտի պաշտամունքից և քրիստոնէութիւն ընդունել:

Վաղարշապատ վերադառնալով՝ Թագաւորը հասարակաց հաւանութիւնով որոշեց Ս. Գրիգորին Հայոց աշխարհի ընդհանուր հովիւ կարգել: Տասնեւվեց երեսելի նախարարների յանձնուեց Լուսաւորչին արքունի հրովարտակով տանել Կեսարիա, ուր Գևոնդ մետրապոլիտը իր ձեռքի տակ եղած եպիսկոպոսներով ձեռնադրեց նրան Հայոց եպիսկոպոսապետ: Երբ այնտեղից վերադարձաւ Հայաստան՝ Տրդատ Թագաւորը իր ընտանիքով ու զօրքով առաջ գնաց նրան դիմաւորելու: Մի ամբոխ ժողովրդին պատրաստելուց յետոյ՝ Լուսաւորիչը հետը բերած քահանաների գործակցութիւնով մկրտեց ու հաղորդեց Թագաւորին իր ընտանիքով, զօրքին և բոլոր բազմութեանը: Եօթն օրուայ մէջ չորս միլիոնից աւելի մարդ մկրտեց:

Սրանից յետոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչը սկսեց շրջել Հայաստանի հեռաւոր գաւառներն ու քաղաքները, անդադար քարոզելով ու մկրտելով և մեհեանների տեղ եկեղեցիներ ու վանքեր հաստատելով: Գործի յարատևութեան համար՝ արքունի հրամանով քրիստոնէական դպրոցներ հիմնուեցին և այս դպրոցների առաջադէմ սաներից քահանայ և եպիսկոպոս ձեռնադրուեցին: Այսպիսով գործից փոքր ինչ թեթևանալով՝ Ս. Լուսաւորիչը ժամանակ առ ժամանակ առանձնանում էր, և որպէսզի ժողովուրդը առանց Հովուապետի չը մնայ՝ Թագաւորի առաջարկութիւնով նրա որդիները Կեսարիայից բերուեցին և փոքրը, Արիստակէսը, Հօրից եպիսկոպոս ձեռնադրուելով՝ սրան տեղապահ կարգուեց: Այսպէս հիմնուեց Ս. Գրիգոր Լուսաւորչի գահը, որ շարունակւում է մինչև այսօր:

Եօթն օրուայ ճանապարհ—семидневный путь.—Ձեռքի տակ եղած—бывшій у него подъ рукой, подчиненный ему.—Առաջ գնալ—выступить на встрѣчу.—Այսպիսով—такимъ образомъ.—Ժամանակ առ ժամանակ—отъ времени до времени, по временамъ.

Առաջարկութիւնով (Թագաւորի)—по предложенію (царя).—Մինչև այսօր—до сегодня, до нашего времени.

Դեռ—пока.
Փրկիչ,-կչի—Спаситель.
քարոզութիւն—проповѣдь.
արձագանգ,-ի—отголосокъ, эхо.
Աբգար,-ի—Абгаръ.
Եդեսիա,-չի—Эдесса.
հեթանոս,-ի—язычникъ.
հաւատալ—вѣрить.
Երուսաղէմ,-ի—Іерусалимъ.
այցելել—посѣщать.
ականատես,-ի—очевидецъ.
հրաշագործութիւն—чудотвореніе.
հիւանդ—больной.
բժշկուել—лечиться, вылечиться.
շտապել—поспѣшить.
Անանէ,-ի—Ананэ.
սուրհանդակ,-ի—гонецъ; посланникъ.
թուղթ, թղթի—бумага; грамота, письмо.
բժշկել—лечить.
հրեայ,-ի—еврей.
հալածանք,-ի—гоненіе.
յանձնել—поручить.
Թոմաս,-ի—Ѳома.
առաքեալ,-ի—апостолъ.
համբարձում,-ման и-ի—вознесеніе.
աշակերտ,-ի—ученикъ.
Թադէոս,-ի—Ѳаддей.
եդեսացի—эдессецъ.
Աղդէ,-ի—Аддэ.
եպիսկոպոս,-ի—епископъ.
ձեռնադրել—рукоположить, посвятить.
հրովարտակ,-ի—манифестъ.
քրիստոնէութիւն—христіанство.
քարոզել—проповѣдывать.
շուտով—вскорѣ.
ընկերանալ—сдѣлаться товарищемъ, присоединиться.
Բարթուղիմէոս,-ի—Варѳоломей.
հիմնուել—основаться.
եկեղեցի—церковь.
խոր—глубокій.
մեհեան,-ի—языческій храмъ, капище.
բաց անել—раскрыть, открыть.
հեթանոսութիւն—язычество.
վերահաստատել—возстановить, вновь утвердить.
կրօն,-ի—религія.
դար,-ի—вѣкъ.
տևել—продолжаться.
անհետանալ, исчезнуть.
բնակիչ,-կչի—житель.
այսպէս,—и такъ.
ուրեմն,—слѣдовательно.
ցանել—сѣять.
սերմ,-ի—сѣмя.

պատրաստել—приготовить.
լիովին—вполнѣ.
Ս. (սուրբ)—Святой.
Գրիգոր,-ի—Григорій.
լուսաւորիչ,-րչի—просвѣтитель.
Ծնուել—родиться.
չիսուններօթը թուականին—въ 57-мъ году (послѣ рожденія).
Վաղարշապատ,-ի—Ваг'аршапатъ.
Անակ,-ի—Анакъ.
Պարթև,-ի—парѳянинъ.
տարեկան—годовой.
Սոփիա,-ի—София.
ստնտու, ի—кормилица.
Կեսարիա,-ի—Цезарея.
մանուկ,-ի—младенецъ.
մկրտուել—выкреститься, принять крещеніе.
սնուել—питаться; воспитываться.
հոգի—духъ, душа.
սովորել—учиться.
յունարէն—греческій.
ասորերէն—сирійскій.
լեզու—языкъ.
վերաբերեալ—относящійся.
գիտութիւն—знаніе, наука.
չափահաս,-ի--совершеннолѣтный.
ամուսնանալ—жениться.
յոյն,-ի—грекъ.
աղջիկ, -ջկայ—дѣвушка; дочь.
Հռոմ,-ի—Римъ.
արքայորդի,-դու—царевичъ.
յորդորել—побуждать.
Երիզա,-ի—Ериза.
Անահիտ,-ի—Анаг'итъ.
դիցուհի—богиня.
հայրենի—родной, отцовскій.
Ծաղկէ—изъ цвѣтовъ, цвѣточный.
պսակ,-ի—вѣнокъ.
առնել—взять.
կանաչ—зеленый.
ոստ,-ի—вѣтка.
ոսկեմայր, -մօր—золотая матерь; эпитетъ богини Анаг'итъ.
նուէր,-ի—даръ; приношеніе.
յանձն առնել—соглашаться.
հնար,-ի,—способъ, выдумка.
փոխել—перемѣнить, измѣнить.
անդրդուելի—непреклонный.
սպառնալի.ք,-ի—угроза.
տանջան.ք,-ի—мука, мученіе.
շարունակ—безпрестанно.
վիրապ,-ի—яма.
ապագայ—будущій.
երկար—долгій.
անվնաս—невредимый.
բարեպաշտ—благочестивый.
տասնևչորս—четырнадцать.
վիհ,-ի—яма; пропасть.
խումբ, խմբի—группа.
հաւատաւոր—иночествующій; монашествующій.
կոյս,-ի—дѣва; монахиня.
Գայիանէ,-ի—Гайанэ.
ապաւինել—найти убѣжище.
Հռիփսիմէ,-ի—Г'рипсимэ.
Դիոկլետիանոս,-ի—Діоклетіанъ.
հնձան,-ի—давильня.
կերակրուել—питаться, кормиться.
ապակեայ—стекляный.
ուլունք,-ի—бисеръ, бусы.
գին, գնի—цѣна, стоимость.
հինել—дѣлать.
հիման վրայ—на основаніи.

որոնել—разыскать.
ապաստանել—найти убѣжище, укрыться.
թագաւորավայել—подобающій царю, царскій.
ընդդիմանալ—воспротивиться.
քաշէ.քաշ—волокомъ, волоча.
հարսանի.ք,-ի—свадьба.
հանդէս,-ի—торжество.
շուրջը—вокругъ, кругомъ.
բազմութիւն—толпа.
խռնուել—смѣшаться.
ժամ,-ի—часъ.
ամբոխ,-ի—толпа.
ճեղքել—разсѣкать.
ընկերուհի—подруга.
բնակարան,-ի—жилище.
դահիճ,-հճի—палачъ.
ցից, ցցի—колъ.
այրել—жечь, сжечь.
համոզել—убѣдить.
սաստիկ—сильный, страшный.
ընդամենը—всего.
նահատակուել—принять мученическую смерть.
երեսներօթ—тридцать семь.
անմեղ—невинный.
խիղճ, խղճի—совѣсть.
տանջել—мучить.
մելամաղձութիւն—меланхолія.
կառ.ք,-ի—экипажъ, фаэтонъ.
վայրի—дикій.
գազան,-ի—звѣрь.
թափառել—скитаться.
անտառ,-ի—лѣсъ.
Խոսրովիդուխտ,-ի—Хосровидухтъ
լուսազգեստ—въ свѣтозарной одеждѣ.
աստուածային—божественный.
պատուհաս,-ի—кара.
այնքան—столько.
տարի,-րու—годъ.
կենդանի—живой; живъ.
կրկնուել—повториться.
Օտա Ամատունի—Ота Аматуни.
Արտաշատ,-ի—Арташатъ.
պարան,-ի—канатъ.
ցած—внизъ.
շարժուել—колебаться, шататься.
նահատակ,-ի—мученикъ.
մութ—темный.
խոնաւ—сырой.
սքանչելի.ք,-ի—чудо.
ախտացած—подверженный недугу, болѣзненный.
ծունկ, ծնկի—колѣно.
չոգել—стать на колѣни.
աղօթել—молиться.
փոքր ինչ—немного.
թեթևութիւն—облегченіе.
զգալ—чувствовать.
Հռիփսիմեան—Г'рипсимійскій.
նահատակութիւն—мученичество.
իւրաքանչիւր—каждый.
պատառոտուն--рваный.
հանդերձ,-ի—платье, одежда.
պատել—завернуть, обернуть.
տեղաւորել—помѣстить.
նախարար,-ի—нахараръ, владѣтельный князь.
հաւաքուել—собираться.
քրիստոնէական—христіанскій.
հաւատ,-ի—вѣра.
նախապատրաստութիւն—подго-

товка.
ամիս, ամսի—мѣсяцъ.
նորահաւատ—новообращенный; новокрещенецъ, неофитъ.
ձեռք զարնել—приняться за.
վկայարան,-ի—часовня надъ могилой мученика.
շինել—строить.
պատիւ,-տուի—честь.
նահատակել—убить за вѣру.
ջերմեռանդութիւն—рвеніе.
աստուածահաճոյ—богоугодный.
քահ,-ի—заступъ.
գերեզմանատեղ,-ի—могила.
Աշխէն,-ի—Ашхэнъ.
փէշ,-ի—полъ платья.
բաւականանալ—довольствоваться.
եօթը—семь.
Մասիս—Масисъ (гора Арарать).
ութը—восемь.
խոշոր—крупный.
շեմք,-ի—порогъ.
կանգնեցնել—поставить.
այնուհետեւ—послѣ того.
շրջել—ходить, ѣздить.
անոտի—пустой, ложный.
պաշտամունք,-ի—богослуженіе.
հասարակաց—общественный, всеобщій.
ընդհանուր—всеобщій; верховный, главный.
հովիւ,-ւի—пастырь.
կարգել—назначить.
տասնեւվեց—шестнадцать.
երեւելի—знатный.
Կեսարիա,-ի—Цезарея.
Ղեւոնդ,-ի—Г'евондъ.
մետրապոլիտ,-ի—митрополитъ.
եպիսկոպոսապետ-ի,—глава надъ епископами, католикосъ.
ընտանիք,-ի—семейство.
դիմաւորել—встрѣчать.
քահանայ,-ի—священникъ.
գործակցութիւն—содѣйствіе, соучастіе.
հաղորդել—причастить.
չորս,-ի—четыре.
միլիոն,-ի—милліонъ.
հեռաւոր—отдаленный.
անդադար—безпрестанно.
մեհեան,-ի—языческій храмъ.
վանք,-ի—монастырь.
յարատեւութիւն—долговѣчность.
դպրոց,-ի—школа.
առաջադէմ—успѣвающій.
սան,-ի—воспитанникъ.
թեթեւանալ—облегчиться.
առանձնանալ—уединяться.
հովուապետ,-ի—архипастырь.
առաջարկութիւն—предложеніе.
Արիստակէս,-ի—Аристакесъ.
տեղապահ,-ի—замѣститель.
գահ,-ի—тронъ, престолъ.
շարունակուել—продолжаться.
այսօր—сегодня.

Стихотворенія[1].

ՀՈՎՈՒԻ ԱՆԿՈՂԻՆԸ

(Постель пастуха).

Սա-րի լանջն-է || մահ-ճա-կալ

Սարի լանջն է մահճակալ,
Ձեչոտ քարը գլխա կալ.
Մի հին կապերտ ուսերին —
Այս է հովուի անկողին։
Երբ անձրեւ է կաթկաթում
Եւ կապերտը թրխկթրխկում՝
Հովիւն անուշ քընի մէջ
Գաղջըր երազ է տեսնում։

Անկողին, ղնի—постель.
սար,-ի—гора.
լանջ,-ի—грудь; սարի—откосъ, отлогъ горы.
մահճակալ,-ի—кровать.
ձեչոտ—рябой; —քար—ноздреватый камень.
գլխակալ,-ի—подушка.
կապերտ,-ի—коверъ; паласъ.
անձրեւ,-ի—дождь.
կաթկաթել—капать.
թխկթխկալ—стучать.
անուշ—сладкій.
քուն, քնի—сонъ.
երազ,-ի—сновидѣніе, сонъ.

---

[1]) Стихосложеніе въ армянскомъ языкѣ силлабическое. Въ каждомъ стихѣ отъ пяти до шестнадцати слоговъ или тактовъ (ոտ); стихи съ меньшимъ числомъ слоговъ попадаются рѣдко; стихи, имѣющіе болѣе пяти слоговъ, раздѣляются на части или члены цезурой, которая падаетъ послѣ ударенія въ словѣ. Члены или стопы бываютъ трехсложные или четырехсложеные. Такихъ членовъ въ каждомъ стихѣ можетъ быть не болѣе четырехъ.

Գլխակալ—въ прозѣ գլխակալ: въ стихахъ приставляется ը вездѣ тдѣ оно образуетъ полный слогъ. Հովուի—начало հովիւ. հաշիւ, -ուի. թիւ, թուի. **правило:** при склоненіи существительныхъ на իւ (ив), окончаніе это предъ гласными стягивается въ звукъ ուի (հովիւ, род. հովուի, отл. հովուից, мн. ч. հովիւներ. թիւ, от. թուից, ин. թուում (թուումն), мн. ч. թուեր и т. д.).

Ե Ր Ա Զ

(Сонъ).

Ես-լը-սե-ցի ‖ մի-ա-նուշ-ձայն.
Իմ-ծե-րա-ցած ‖ մօր-մօտ-էր.

Ես լըսեցի մի անուշ ձայն.
Իմ ծերացած մօր մօտ էր.
Փայլեց նըշոյլ ուրախութեան.
Բայց ափսո՜ս որ երազ էր:
Կարկաչահոս աղբիւր այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.
Նա յ ը ս տ ա կ էր որպէս բիւրեղ.—
Այն երազ էր ցնորամիտ:
Եւ մեղեդին տխուր մայրենի
Յիշեց մ ա ն կ ու թ ե ան օրեր,—
Մօրըս համբոյրն ես ըզգացի.
Ա՜խ, ափսո՜ս, որ երազ էր:
Կուրծքին սեղմեց կարօտագին
Աչքերս սրրբեց—շատ թաց էր,—
Բայց ա ր տ ա ս ո ւ ք գ ը ն ու մ էին.
Ա՜խ, այդ ինչո՜ւ երազ էր:

Երազ, ի—сновидѣніе, сонъ.
Ծերանալ—состариться.
Ծերացած—старый.
փայլել—блестѣть, засверкать.
նշոյլ,-ի—проблескъ, отблескъ.
ուրախութիւն—радость.
ափսո՜ս—жаль!
կարկաչահոս—журчащій.

Յստակ—болѣе употребительное լստակ:—Տխուր—составляетъ одинъ слогъ для стиха (хотя по природѣ оно двухсложное—տրխուր—см. § 5, 1, 3). Յիշեց մանկու||թեան օրեր—цезура падаетъ въ срединѣ слога, слѣдовательно стопа кончается неударенным, или неправильно ударенным слогомъ; это несовершенство стиха, что иногда допускается всѣми поэтами.—Արտասուք գնում էին—слово արտասուք поставлено въ древнемъ именит. множ. числа (единств. числа не имѣло), тогда какъ правильное множеств. число արտասուքներ:

աղբիւր,-ի—родникъ.
թաւալել—кувыркать, катить.
յստակ—чистый.
բիւրեղ,-ի—кристаллъ, хрусталь.
ցնորամիտ—мечтательный; безумный.
մեղեդի—мелодія.
տխուր—грустный, скучный.
այրենի—материнскій, родной.
յիշել—напомнить.
մանկութիւն—дѣтство.
մայր, մօր—мать.
համբոյր,-ի—поцѣлуй.
սեղմել—прижать.
կարօտագին—тоскливый; желанный, радостный.
սրբել—чистить; вытереть.
թաց—мокрый.
արտասուք,-ի—слеза.

Հ Ա Տ Ի Կ

(Зернышко).

Լոյ-սը-բաց-ւում-է ‖ շուտ-ար-տը-գը-նամ

Լ ո յ ս ը բ ա ց ւ ու մ է. շուտ արտը գընամ,
Պ ա տ ռ ե մ սուր խոփով ես կուրծքը հողի:
Իմ սիրուն հատիկ, քեզ նըրան պահ տամ
Մ ի ն չ և օրերըն ա մ ր ա ն արևի:
Թաղեմ քեզ, հատիկ, և գարդս էլ քեզ հետ:
Թէ Աստուած ուղեց, դու կանաչեցիր՝
Թող գարդըս մ ե ռ ն ի գետնի տակ անհետ.
Դու ինձ մ ր խ ի թ ար կըրկին տուն գ ա ր ձ ի ր:
Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջև
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծըխեմ,
Որ քեզ պարգևէ մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայէ խ ը ն դ ա ղ ե մ:

Լոյսը բացւում է—разсвѣтаетъ, заря занимается.—Պատռել=պատառել:—Ամրան—народное слово (вм. ամառուայ)... до (наступленія) дней лѣтняго солнца.—Թող մեռնի—особая форма повел. накл. (=թող, որ մեռնի); մեռնի см. стр. 38 примѣчаніе; ի наиболѣе сохранилось въ 3 л. ед. ч.—Գարձիր—нач. դառնալ—§ 17, 13.

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար
Արժան չը լինեմ՝ ծով կը դարձընեմ
Ես տաք քըրտինքը ճակտիս արևառ,
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չը թողնեմ:
Ծըլիր, կանաչիր, ոսկէ սաւանով
Ծածկիր իմ արտը ողջ ալէծածան.
Նոր այն ժամանակ անուշ շրշիւնով
Տուր ջարդուած սրբտիս մի քուն հանդըստեան:

Ար-ի—пашня.
պատռել—разорвать, распороть.
խոփ,-ի—сошникъ.
հող,-ի—земля.
սիրուն—прекрасный, милый.
պահ տալ—отдать на храненіе.
ամրան—лѣтній.
դարդ,-ի—горе.
կանաչել—зеленѣть.
գետին,-տնի—земля, почва.
մխիթար,-ի—утѣшитель.
դառնալ—вернуться.
ջերմ—теплый, горячій.
աղօթ-ք,-ի—молитва.
Տիրամայր,-մօր—Богоматерь.
մոմ,-ի—свѣча.
վառել—зажечь.
խունկ, խնկի—ладанъ.
ծխել—курить.
առատ—обильный.
խնդագէմ—съ радостнымъ видомъ, радостный.
շնորհ,-ի—милость, одолженіе.
մեղ-ք,-ի—грѣхъ.
արժան—достойный.
դարձնել—превратить.
տաք—горячій.
քրտինք,-տնքի—потъ.
արևառ—загорѣлый отъ солнца.
ծարաւ—съ жаждой, жаждущій.
ծլել—пускать ростки, расти.
սաւան,-ի—покрывало, саванъ.
ողջ—цѣлый, весь.
ալէծածան—волнующійся, волнистый.
նոր—новый, вновь.
շշիւն,-ի—шопотъ, шелесть.
հանգստեան—отдохновенія; —քուն—успокоительный сонъ.

ճակտիս=ճակատիս. первая—форма народнаго языка (это стихотвореніе написано въ духѣ народномъ).—Ողջ—буквально значитъ „живой“; здѣсь обозначаетъ „весь“.—Նոր այն ժամանակ—и только тогда.—Հանգըստեան—древняя форма род. над. ед. ч. отъ слова հանգիստ: Существительныя съ этимъ окончаніемъ теперь употребляются какъ прилагательныя, слѣд. հանգստեան успокоивающій, успокоительный.

Ի Մ Ե Ր Գ Ը

(Моя пѣсня).

Հե-ռա-ցել-եմ || իմ-մայ-րե-նի || աշ-խար-հից

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատուած են ինձանից:
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բուսած ծաղկի նման դաշտումը:
Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն ամառ դարձնում են:
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կրկնւում է միշտ այսօր:
Ասպարէզիս նեղ է ճամբան ու փշոտ,
Խեղճութիւնըս համարում են ինձ ամօթ.
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի.
«Գա, ասում են, իր կեանքումը դարդ չունի»:
Ես դարդ ունիմ, դարդըս մեծ է ու սէսպէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես:
Երբ ես մըտայ անհիւրընկալ այս աշխարհ՝
Գանի րոպէ բախտը ժըպտաց ինձ պայծառ:
Հա՛, ասացի, դարձել է իմ անիւը,
Լըրացել է իմ վատ բախտի չար թիւը:
Յանկարծ փըչեց անտուժելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ մանուշակ մայիսին:
Այսպէս չորցուց իմ նազելի հասակը

Բարեկամք—древній им. множ. числа (=բարեկամներ), допущено для стиха.—Մեզ նորոգած գարուն ամառ դարձնում են—обновленную весну превращаютъ (годы) намъ въ лѣто, т. е. весна и лѣто чередуются другъ за другомъ.—Ձամբայ—народное слово (=ճանապարհ).—Մարդ չունի (կարեկցութիւն),—никто не оказываетъ участія; չունի—см. § 18, 5.—Այս աշխարհ=այս աշխարհը. опредѣленный членъ пропущенъ для риѳма.—Հիւսիսին=Հիւսիսային (քամի)—сѣверный вѣтеръ, борей.—Մայիսին—въ маѣ.—Չորցուց—нар. об. (=չորցրեց).

Իմ անողորմ, անագորոյն վիճակը:
Ա՛խ, մօտեցիր, օրհասական օր մահուան,
Բեր քո հետը սև հող ու նեղ գերեզման:
Թող սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ծանրը քարէ վրրաս ծածկած վերմակը:
Բայց, ա՛խ, երբ որ կանցնի ամիս ու տարի՝
Կը մամռոտի գերեզմանը այն քարի,
Հետքըն անգամ չէ մընալու այն խաչին.
Իմ անունը, իմ յիշատակ կը կորչին:
Բայց կուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէդար մընար ամուր, անկործան:
Ես երգեցի երգ ոլորուն և անուշ,
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քնքուշ:
Մի՛թէ այնքան անգութ կ'լինի Լետա գետ,
Որ անունս անգամ կանէ նա ահետ:

Երգ,-ի—пѣсня.
անջատուել—разлучиться.
թառամել—увядать.
օտար—чуждый, чужой.
նորոգել—обновлять.
արուն,-րնան—весна.
դարձնել—повернуть, превратить.
խեղճ—бѣдный, убогій.
ոչինչ—никакой, ничто.
նոր—новый; новь.
երեկ,-ուայ—вчера.
այսօր,-ուայ—сегодня.
ասպարէզ,-ի—арена, поприще, карьера.
փշոտ—тернистый.
խեղճութիւն—бѣдность.
ամօթ,-ի—стыдъ, позоръ.
վիճակ,-ի—доля, судьба.
կարեկցութիւն—участіе, сострадапіе.
դարդ,-ի—горе.
պէսպէս—разнообразный.
կարճատես—близорукій.
անհիւրընկալ—негостепріимный.
բախտ,-ի—счастіе, судьба.
ժպտալ—улыбаться.

Մահուան—древн. род. ед. числа, имѣющ. значеніе прилагательнаго—смертный;—օր—день смерти, смертный часъ.—Կանցնի, կը մամռոտի—см. 38 примѣч.—Իմ յիշատակ =իմ յիշատակը.—Ոլորուն երգ—красиво, звучно сложенная пѣсня.—Մեղմիկ—начало մեղմ—нѣжный; իկ—суф. уменьш. и ласкат.—Կ'լինի=կը լինի: въ стихѣ ը часто опускается (элизія) и замѣняется апострофомъ.—Լետա գետ(ը) - рѣка забвенья, Лета.

նեղ—тѣсный, узкій.
ճամբայ-ի—путь.
պայծառ—свѣтлый, блестящій.
հա—да!
անիւ,-ուի—колесо.
չար—злой; зловѣщій.
անտուժելի—нестерпимый, суровый.
վարդ,-ի—роза.
մանուշակ,-ի—фіалка.
մայիս,-ի—май.
չորցնել—сушить.
նազելի—нѣжный.
հասակ,-ի—возрастъ.
անողորմ—неумолимый.
անագորոյն—жестокій.
մահուան—смертный.
գերեզման,-ի—могила.
սառ—холодный.
յատակ,-ի—полъ.
մամռոտել—покрыться, обрасти мхомъ.
յիշատակ,-ի—память, воспоминаніе.
այստեղ - здѣсь.
դարէդար—изъ вѣка въ вѣкъ, вѣчно.
ամուր—крѣпкій.
անկործան—несокрушимый.
երգել—пѣть.
ոլորուն—извилистый, сплетенный.
քնար,-ի—лира.
անգութ—безжалостный.
Լետա—Лета (рѣка).
անհետ—безъ слѣда, безслѣдный; —անել—уничтожить безъ слѣда.

Ա Շ Ո Ւ Ղ

(А ш у г ъ).

Ասի աշուղ || աւռ չոնգուրըդ || մեզ բան ասա || սըրտալի

Ասի, աշուղ, ա՛ռ չոնգուրըդ, մեզ բան ասա՛ սըրտալի,
Կարօտ ենք քո անուշ ձայնիդ, մի բան ասա՛ սըրտալի.
Սրտի խօսք ենք ուզում քեզնից, որ զարթնացնէ մեր Հոգին.
Ա՛ռ չոնգուրըդ, դարդոտ աշուղ, մեզ բան ասա՛ սըրտալի:
Գիտենք, որ դու միշտ տանջւում ես Հազար ու մի ցաւերով.
Հայրենիքիդ խոր խոցերը դու համրում ես դարերով.

Աշուղ—ашу'ъ, народный пѣвецъ (часто слѣпой) на востокѣ; ашу'и нерѣдко сами слагаютъ пѣсню и поютъ подъ звуки струнныхъ инструментовъ; չոնգուր—одинъ изъ видовъ такихъ инструментовъ.—Կարօտ ենք—тоскуемъ, жаждаемъ.—Սրտի խօսք—изъ сердца, прочувствованное слово.—Զարթնացնել (пробудить), народн. слово (=զարթեցնել).—Համրել=համարել:

Չես լըւանայ այդ խոցերը արտասուքի ծովերով,
Ա՛ռ չոնգուրըդ, ցաւոտ աշուղ, մեզ բան ասա՛ վըշտալի։
Լուռ մընալով մեր վէրքերին պիտի չանես դու դարման.
Արար-աշխարհ գիտէ, չըկայ մեր դարդերին չափ սահման.
Մընջութիւնն էլ նըշան հո չէ մի դովելի յատկութեան.
Առ չոնգուրըդ, մեզ բան ասա՛, թող խօսքդ լինի ցաւալի։
Այդպէս խօսքեր շատ ենք լըսել, էլ կը լըսենք անտըրտունջ.
Մեր չըխօսկան լինելուցն է, մընացել ենք անտէրունչ.
Լաւ է ազատ լաց լինելը, քան դարդ անելն անմրմունջ։
Ասա՛ լըսենք, ինչ անենք որ խօսքդ կ՚լինի ազդալի։
Տեսնում ես որ մենք թըմրած ենք, քունն անուշ է մեզ թըւում.
Է՞ր ես դու էլ մեզ բոլորիս մաշող քընկից յաղթըւում։
Ա՛ռ չոնգուրըդ, տո՛ւր լարերին, կըրակ վառի՛ր մեր սըրտում.
Մեզ ամենից նոր շունչ տըւող մի բան ասա՛ սըրտալի։

Աշուղ,-ի—ашугъ, пѣвецъ.
չոնգուր,-ի—чонгуръ (струнный инструментъ, подъ акомпанементъ котораго поетъ ашугъ).
սրտալի—сердечный.
կարօտ—тоскующій, жаждущій.
զարթնացնել—пробудить.
դարդոտ—горюющій, скорбящій.
տանջուել—мучиться.
խոց,-ի—язва, рана.
համրել—считать.
լուանալ—мыть, обмыть.
արտասուք,-ի—слеза.
լուռ—молчаливый.
արար-աշխարհ—весь миръ.
չափ,-ի—мѣра.
մընջութիւն—нѣмота, безмолвіе.
դովելի—похвальный.
յատկութիւն—свойство, признакъ.
ցաւալի—скорбный, горестный.
անտրտունջ—безропотный; -но.
խօսկան—говорящій; չը—молчаливый, безмолвный.
անտէրունչ—покинутый, брошенный.
լաց,-ի—плачъ.
անմռունչ—нѣмой, безмолвный, безропотный.
թմրած—онѣмѣлый; безчувственный
թուալ—казаться.
Է՞р—зачѣмъ?
մաշող—изнашивающій, подтачивающій; гибельный.
հունչ, հնչի—духъ.

Չես լուանայ—не смоешь.—Արտասուքի ծովերով—моремъ слезъ.—Դարման անել (վէրքերին) исцѣлять раны.—Արար-աշխարհ, народное выраженіе: (Богомъ) созданный міръ.—Մընջութիւն—безмолвіе, молчаніе.—Լաց լինել—плакать.—Տո՛ւր լարերին—ударь объ струны!—Հունչ տալ—внушить духъ, одушевить.

ԱՆԱՀԻՏ

(историческая легенда).

Ա.

Մի ժամանակ Աղուանից աշխարհի թագաւորանիստ քաղաքը Պարտաւն էր, որ այժմ աւերակ է և ասւում է Բարդա։ Պա գտնւում էր այժմեան Գանձակի և Ջուշու մէջ տեղը, Թարթառ գետի վրայ։ Այդտեղ էր Վաչէ թագաւորի հոյակապ ապարանքը, ընդարձակ ծառաստանը իր հոկայական չինարներով ու բարտիներով, որոնց ստուերի տակ ճաճկւում էին քաղաքի նոյն իսկ ամենաաբարձր աշտարակները։

Մի անգամ Վաչէ թագաւորի որդին Վաչագանը, որ մի նորահաս երիտասարդ էր, պալատի պատշգամի վրայ կռթնած, նայում էր իրանց այդ ծառաստանին։ Եղանակը զարնանային էր և կէսօրից առաջ։ Աշխարհի բոլոր երգեցիկ թռչունները, կարծես խօսք մէկ արած՝ հաւաքուել էին այդ ծառերի վրայ, որ մի ընդհանուր նուագահանդէս սարքեն և իրար հետ մրցեն։ Մինն իր սրիդն էր փչում, միւսն իր փողը, բայց յաղթանակը խօսողն էր տանում։ Սոխակն էր այդ խօսողը, սիրահար սրտերի միակ մխիթարիչը։

Արդեօք սրանց էր ականջ դնում Վաչագանն այնպէս լուռ, այնպէս ակնապիշ։ Ո՛չ... Ուրիշ հոգս, ուրիշ ցաւ կար նրա սրտում. սրանք միայն ատելացնում էին նրա ցաւն և նոր տխրութեան մէջ ձգում նրան։

Աղուանից աշխարհ, страна албанцевъ—Албанія; слѣдомъ աշխարհ (міръ, страна) обозначается и провинція.—Թագաւորանիստ քաղաք—резиденція (царей), столица.—Ծառաստան—паркъ.—Նոյն իսկ—даже и.—Կէսօրից առաջ—до полудня.—Կարծես—кажется, будто.—Խօսք մէկ արած—сговорившись, условившись.—Նուագահանդէս սարքել—устроить, дать концертъ.—Սրինգ փչել—играть на свирѣли; փող փչել—играть на трубѣ.—Խօսող, խօսել—(говорить), здѣсь въ значеніе пѣть (սոխակը, սաքաղը խօսում է—соловей, пѣтухъ поетъ).—Ականջ դնել—приставить ухо, слушать.—Տխրութեան մէջ ձգում (էին)—ввергали въ грусть, нагоняли печаль.

Այս տխուր մտմտոցից հանեց Վաչագանին նրա մայրը, Աշխէն Թագուհին, որ այդ րոպէին մօտեցաւ նրան և մօտը նստելով հարցրեց.

—Վաչիկ, ես տեսնում եմ, որ դու սրտումդ մի ցաւ ունես, բայց թաքցնում ես մեզնից: Որդի, ասա ինձ, ինչո՞ւ համար այդպէս տխուր ես:

—Մայր, ճշմարիտ ես ասում, պատասխանեց որդին, —աշխարհիս փառքն ու վայելչութիւնն աչքիս չեն երևում: Ուզում եմ հեռանալ աշխարհից և գնալ անապատ: Ասում են, Մեսրոպ վարդապետը կրկին եկել է Հացիկ, իր շինած վանքում միաբանութիւն է հաստատել, աշակերտներ ժողովել. ուզում եմ ես էլ գնալ այնտեղ: Մայր, դու չը գիտես, թէ ինչքան լաւ գիւղ է այդ Հացիկը: Այնտեղ թէ տղաներն և թէ աղջիկները այնպէս սրամիտ, այնպէս գեղեցիկ են, որ եթէ տեսնես՝ կը մնաս հիացած:

—Ուրեմն նրա համար ես գնում Հացիկ, որ այնտեղ տեսնես քո սրամիտ Անահիտին:

—Մայր, դու ինչպէ՞ս գիտես նրա անունը:

—Մեր պարտէզի սոխակները բերին ինձ այդ համբաւը: Սիրելի Վաչիկ, ինչո՞ւ ես մոռանում, որ դու Աղուանից Թագաւորի որդին ես: Թագաւորի որդին կամ Թագաւորի, կամ մեծ իշխանի աղջիկ ուզէ, և ոչ թէ մի գեղջկուհի:

—Մայր, ես արդէն ասեցի, որ պիտի երթամ վանք. բայց եթէ դուք ուզում էք, որ ես անպատճառ ամուսնանամ՝ ապա գիտցէք, որ իմ ուզածը միայն և միայն Անահիտն է....

Աչքիս չեն երևում - въ моихъ глазахъ не имѣютъ цѣны, значенія —Գնալ անապատ—идти въ пустыню; движеніе (обст. мѣста), на вопросъ куда, и время (обст. времени), на вопросъ когда, выражаются винит. падежомъ.—Հիացած կը մնաս—останешься въ удивленіи, удивишься.—Վաչիկ—уменьшительно—ласкательная форма собств. имени Վաչագան; իկ приставляется или прямо къ собственному имени, или съ отбрасываніемъ одного или двухъ послѣднихъ слоговъ.—Աղջիկ ուզել - свататься.—Իմ ուզածը—моя желанная, мой выборъ.

Այս ասեց Վաչագանը և ամօթից կարմրելով՝ վազեց դէպի պարտէզ: Այդ օրից Վաչագանը ինքն իրեն որսորդութեան տուեց:

Բ.

Մէկ օր, սովորական որսորդութեան ժամանակ՝ Վաչագանն ու նրա հաւատարիմ ծառայ Վաղինակը հասան մի գիւղ և նստեցին նրա աղբիւրի մօտ, որ Հանդստանան: Շատ յոգնած ու քրտնած էին: Գիւղի աղջիկներն եկել էին աղբիւրից ջուր տանելու և հերթով լցնում էին կուժերն ու փարչերը: Վաչագանը սաստիկ ծարաւել էր: Նա ջուր ուզեց, և աղջիկներից մէկը լցրեց փարչը և ուզեց Վաչագանին տալ. բայց մի ուրիշ աղջիկ նրա ձեռքից խլեց փարչը և դատարկեց: Ինքը նորից լցրեց, բայց էլի դատարկեց: Վաչագանի բերանը ցամաքել էր և անհամբեր սպասում էր, թէ երբ պէտք է նրան ջուր հասցնեն: Բայց մեր անճանօթ աղջկայ հոգը չէր այդ. նա կարծես խաղ էր անում, լցնում ու դատարկում, և այդ կրկնեց չորս-հինգ անգամ. միայն վեցերորդ անգամին տարաւ իրան անճանօթ որսորդին ջուր տուեց:

Վաչագանն երբ որ խմեց և փարչը տուեց Վաղինակին, ինքն սկսեց խօսեցնել աղջկանն և հարցրեց, թէ ինչո՞ւ նա խակոյն չը բերեց ջուրը. չը լինի՞ թէ կատակ անել ուզեց կամ բարկացնել: Աղջիկը նրան պատասխանեց.

— Մենք սովորութիւն չունենք օտար երիտասարդների հետ կատակ անել, մանաւանդ երբ նրանք ջուր են ուզում: Բայց ահա իմ միտքը: Ես տեսայ որ դուք յոգնած ու քրտնած էք, իսկ այդ վիճակի մէջ սառը ջուրը վնաս է մարդուն.

Ինքն իրեն որսորդութեան տուեց—предался охотѣ.

Հերթով—по очереди.—Ծարաւել էր—чувствовалъ жажду, пить хотѣлъ.—Բերանը ցամաքել էր—высохло во рту.—Ջուր հասցնել—добыть, достать, подать воды.—Հոգը չէր (աղջկայ)—не озабочивало (дѣвушку), (ей) не было дѣла.—Խօսեցնել—побуждать, заставить говорить.—Այդ վիճակի մէջ—въ такомъ положеніи.—Վնաս է—вредна (вода), вредитъ.

գրա համար ես գիտութեամբ ուշացրի, մինչև որ դուք մի փոքր հանգստանաք և հովանաք:

Աղջկայ խելօք պատասխանը զարմացրեց Վաչագանին, բայց գեղեցկուհին աւելի ևս հիացրեց նրան: Նրա աչքերը խոշոր, թուխ-թուխ և վառվռուն էին, յօնքերը կարծես վրձինով քաշած. գլուխը բայց էր և ծամերը վռւաած թիկունքի վրայ. ճակատը լայն, քիթ ու պռօշը նկարածի պէս: Ոչինչ զարդ ու զարդարանք չունէր. հագուստը մի մետաքսէ շապիկ էր, որ նրա վայելչակազմ հասակը ծածկում էր մինչև տներն, և մի ասեղնագործած բաճկոնակ, որով կոճկուած էր նրա բարակ մէջքն ու լայն կուրծքը: Ոտները բոպիկ էին, բայց նոր լուացած կաթնաղբիւրի ջրով՝ բամբակի պէս սպիտակին էլն տալիս: Այսպէս էր Անահիտի արտաքին կերպարանքը. բայց նրա դէմքի գծագրութեան, նրա աչքերի մէջ մի այնպիսի գրաւիչ զօրութիւն կար, որ իսկոյն կախարդեց Վաչագանին և ապշեցրեց նրան:

— Անուղղ ինչ է, հարցրեց Վաչագանը:

— Անահիտ, պատասխանեց աղջիկը:

— Ո՞վ է քո հայրը:

— Իմ հայրը մեր գիւղի հովիւ Առանն է: Բայց ինչո՞ւ ես ուզում իմանալ, թէ իմ անունն ինչ է կամ ո՞վ է իմ հայրը:

— Ոչինչ, հէնց այնպէս հարցնում եմ. հարցնելը հօ մե՞ղք չէ:

— Եթէ հարցնելը մեղք չէ, խնդրո՛ւմ եմ դու էլ ինձ ասես, թէ ինքդ ո՞վ ես, ո՞րտեղացի ես:

— Սո՛ւտ ասեմ, թէ ճշմարիտ:

— Որը քեզ արժան կը համարես:

— Իհարկէ, ես արժան կը համարեմ ճշմարիտը. իսկ ճըշ-

Վրձինով քաշած — нарисованный, писанный кистью. — Պատկեր քաշել — писать картину. — Սպիտակին տալ — дать бѣлый отливъ, отличаться бѣлизной. — Հարցնելը հօ մեղք չէ՞ — вѣдь не грѣхъ спросить.

մարիտն այս է, որ հիմա չեմ կարող ուղիղն ասել, թէ ես ո՛վ եմ, բայց խօսք եմ տալիս մի քանի օրից յետոյ յայտնել:

— Շատ լաւ: Ընորհեցէք ինձ փարչը, և եթէ էլի ջուր էք կամենում՝ բերեմ:

— Ոչ, շնորհակալ ենք. դու լաւ խրատ տուիր մեզ. այդ միշտ կը յիշենք և քեզ չենք մոռանայ:

Անահիտն առաւ փարչը և հեռացաւ:

Далѣе (гл. 3—5) разсказывается, какъ сильно Вачаганъ былъ увлеченъ пастушкой Анаг'итъ, ея умомъ и красотой и на всѣ предложенія и уговоры родителей—оставить эту безумную мечту и жениться на знатной дѣвицѣ—Вачаганъ отвѣчалъ отказомъ, а для развлеченія предался охотѣ и прогулкамъ по горамъ и лѣсамъ. Между тѣмъ слухъ о томъ, что царевичъ Вачаганъ влюбленъ въ пастушку Анаг'итъ и хочетъ на ней жениться, распространился повсюду, и радовался народъ, знавшій о ея красотѣ и способностяхъ.

Ը.

Թագաւորն ու թագուհին տեսան, որ չեն կարողանում Վաչագանի միտքը փոխել, մի երեկոյ խորհուրդ արին և վճռեցին, որ ընդունեն նրա ընտրութիւնը:

Թագաւորն ինքը շատ բարի մարդ էր. նա սրտով հաւասար չէր ամենևին որդու ընտրութեանը: Նա մինչև անգամ ուրախ էլ էր, որ իր որդին բոլոր հպատակների վրայ հաւասար աչքով է նայում և մէկը միւսից բարձր չէ դասում: Նա միայն վախենում էր, թէ մի գուցէ ղրանով գոռոզ իշխաններին զրդռէ իր դէմ: Բայց երբ որ իմացաւ, թէ

Լաւ խրատ տուիր — хорошій урокъ дала.

Միտքը փոխել (Վաչագանի) разубѣдить (Вачагана). — Խորհուրդ արին — посовѣтовались. — Սրտով — въ душѣ, душевно. — Մինչև անգամ — даже. — Հաւասար աչքով — равно, одинаково (относился, смотрѣлъ) — Բարձր չէ դասում — не ставитъ (одного) выше другого, не дѣлаетъ различія.

զիւղացիք շատ ուրախ են այդ բանին և Աննահիտն էլ բարձրը համբաւ է ստացել նրանց մէջ՝ ինքն սկսեց համոզել թագուհուն, որ յօժարի այդ բանին.....

Մի‌ւս օրը կանչեցին Վաղինակին, յայտնեցին իրանց յօժարութիւնը, և նրա հետ երկու պատուաւոր իշխան ևս դնելով՝ մեծամեծ ընծաներով ուղակեցին Հայկի Հարսնախօսութեան:

Երբ որ սրանք հասան Հովիւ Առանի տունը՝ Առանը նրանց սիրով ընդունեց և շնորհաւորեց նրանց գալը: Աննահիտը տանը չէր: Հիւրերը նստեցին սրահումը մի նոր գորգի վրայ, որ Առանը վռեց իսկոյն և ինքն էլ նստեց նրանց կշտին:

Խօսակցութեան նիւթը ամենից առաջ դարձաւ նոր գորգը, որ իր գեղեցիկ նախշերով, գոյների պայծառութիւնով և գործուածքի նրբութիւնով զբաւեց հիւրերի ուշադրութիւնը:

—Այս ինչ հիանալի գորգ է, ասեց Վաղինակը. տանտիկինդ կը լինի գործած անշուշտ:

—Ո՛չ, ես կին չունեմ. ահա հինգ տարի է որ կինս վախճանուել է: Այս գորգը մեր Աննահիտի գործածն է: Բայց ինքը չէ հաւանում. ասում է, իր ուզածին պէս դուրս չեկաւ: Մէկ նորը հինել է, ահա այն ծածկուած ոստայնն է. յոյս ունի, որ այն պիտի իր ուզածի պէս դուրս բերէ:

—Մեր թագաւորի պալատում էլ չկայ մի այսպիսի գորգ,

Այդ բանին—этому (радовались).—Նրա հետ... դնելով - приставивъ къ нему, пославъ вмѣстѣ съ нимъ.—Սիրով - любезно.—Ընդհաւորեց նրանց գալը—привѣтствовалъ ихъ, поздравилъ съ прибытіемъ.—(Նրանց) կշտին (նստեց) - (присѣлъ) возлѣ ихъ, къ нимъ.—Խօսակցութեան նիւթ դարձաւ—сдѣлался предметомъ разговора.—Գրաւեց ուշադրութիւնը—привлекъ вниманіе.—Տանտիկինդ կը լինի գործած—вѣроятно соткала твоя хозяйка. Գործած կը լինի—буд. описательное. —Ինքը չէ հաւանում—сама не одобряетъ, ей самой не нравится.—Իր ուզածին պէս դուրս չեկաւ—не вышло по ея желанію, такъ, какъ она желала.—Յոյս ունի—надѣется.—Դուրս բերէ (իր ուզածին պէս)—сдѣлаетъ, какъ желаетъ.

ասեց իշխաններից մէկը. յետոյ դառնալով Առանին՝ աւելացրեց. «շատ ուրախ ենք որ քո աղջիկն այսքան շնորհալի է: Քո Աննահիտի համբաւը մինչև թագաւորի ականջն է հասել: Եւ ահա մեզ ուղարկել է քեզ մօտ խնամեխօսութեան: Թագաւորը կամենում է, որ քո Աննահիտը տաս իր մեկուճար որդուն Վաչագանին, որ իր թագաժառանգն է:

Իշխանն այս առաջարկութիւնն անելով՝ սպասում էր, թէ Առանը կամ չի հաւատայ, կամ թէ սաստիկ ուրախանալուց վեր կը թռչի տեղից: Բայց Առանը ոչ այս արաւ և ոչ այն, այլ գլուխը քաշ գցեց և սկսեց ցուցամատը գորգի նախշերով սահեցնել: Նրան այդ մտածութիւնից հանեց Վաղինակը՝ ասելով.

—Ինչո՞ւ տխրեցիր, Առան եղբայր. մենք ուրախութիւն ենք բերել և ոչ տխրութիւն: Մենք քո աղջիկը բռնի տանելու չենք: Այդ կախուած է միակ քո կամքից. եթէ ուզես՝ կը տաս, չես ուզել՝ չես տայ. մեզ հարկաւոր է միայն, որ դու ուղիղն ասես, թէ ինչպէս ես կամենում, տա՞լ թէ չը տալ:

—Իմ պատուական հիւրեր, պատասխանեց Առանը.—ես շատ շնորհակալ եմ, որ մեր տէր թագաւորը իր ճոխ պալատի համար իր ծառայի աղքատիկ իրերից մի գորգ է ուզում տանել: Թուցէ այդպիսի մի գորգ, ինչպէս ասացիք գորգի համար՝ չկայ նրա պալատում. բայց ճշմարիտն ասում եմ ձեզ, իմ ձեռին չէ տալն ու չտալը: Ահա կը գայ ինքը աղջիկս, իրան կը հարցնէք. եթէ կը յօժարի՝ ես ոչինչ չունեմ ասելու:

Հէնց այս խօսակցութեան ժամանակ եկաւ Աննա-

Դառնալով Առանին—повернувшись, обращаясь къ Арану.—Մինչև (թագաւորի) ականջն է հասել—дошло до слуха (царя).—Սաստիկ ուրախանալուց—отъ чрезмѣрной радости.—Վեր կը թռչի (տեղից)—подпрыгнетъ (съ мѣста).—Գլուխը քաշ գցեց - опустилъ, наклонилъ голову.—Նախշերով սահեցնել- водить (палецъ) по узорамъ, по рисунку.—Այդ կախուած է - это зависитъ.—Տէր թագաւորը—царь батюшка.—Գորգի համար—относительно ковра.—Իմ ձեռին չէ—не въ моихъ рукахъ, не въ моей власти.—Այս խօսակցութեան ժամանակ—во время этого разговора.

Հիտը, որ իրանց այգումն էր եղել, ձեռին մի զամբիւղ խաղողով դեղձով և տանձ ու խնձորով լիքը: Ղուկս տուեց Հիւրերին, որոնց մասին իրան լմաց էլն տուել, եթէ քաղաքից եկած իշխաններ են, և զամբիւղը ներս տանելով՝ մէջի եղածը դարսեց մի նոր կլայեկած մեծ սինու մէջ և բերեց դրեց Հիւրերի առջև: Ինքը գնաց իր ոստայնի մօտ, վեր առաւ նրա երեսից սաւանը և սկսեց շարունակել իր կիսատ թողած գործը: Իշխաններն սկսեցին նայել, թէ ինչպէս է գործում Անահիտը, և մնացին ապշած նրա արագաշարժ մատների ճարպիկութեան վրայ:

— Անահիտ, ինչո՞ւ ես մենակ գործում, հարցրեց Վաղինակը.— ես լսել եմ որ դու աղջիկ աշակերտներ շատ ունես:

— Այո՛, ունեմ մի քանի հոգի, պատասխանեց Անահիտը, —բայց որովհետև այգեկութ է՝ արձակել եմ: Այստեղ էլ լինեն՝ չեմ բանեցնի սրա վրայ: Այս մէկ հատը ես մենակ պէտք է գործեմ:

— Լսել եմ, որ աշակերտներիդ կալդալ էլ ես սովորեցնում:

— Այո՛, սովորեցնում եմ: Հիմա մեզանում ամեն մարդ պարտական է կարդալ գիտենալ: Այս վերջին օրերս էլի եկաւ ծերունի Մեսրոպը և սաստիկ պատուէր տուեց, որ ամեն մարդ ինքը կարդայ աւետարանն և հասկանայ: Հիմա մեր հովիւներն էլ գիտեն կարդալ և միմեանց սովորեցնում են իրանց հօտն արածեցնելիս: Այժմ եթէ մեր անտառները պտտես՝ բոլոր հաստ ծառերի կեղևները գրոտած կը տեսնես:

— Մեր մէջ ուսումն այդչափ տարածուած չէ, մերոնք ծոյլ են. բայց ես յոյս ունեմ, որ երբ քեզ տանենք մեր քաղաքը՝ դու ծոյլերին արիաջան կը շինես: Մի բոպէ թող քո գործդ, Անահիտ, և ել այստեղ, քեզ բան ունենք ասելու: Տես, ահա քեզ համար ինչ ևր է ուղարկել մեր Թագաւորը:

Այգում էր եղել — находилась въ саду.— Իմաց էին տուել — дали знать.— Մէջը եղածը — бывшее въ ней (содержимое въ корзинѣ).— Կիսատ թողած — оставленный на половину, недоконченный.— Պարտական է — долженъ, обязанъ.— Ես յոյս ունեմ — я надѣюсь.— Ինչևր — чего только, какія вещи?

Վաղինակն այս ասելով՝ բաց արեց մի կապոց և նրա միջից հանեց ոսկէ զարդարանքներ և մետաքսէ հագուստներ:

Անահիտն այդ բանները տեսնելով՝ ամենևին չը յափշտակուեց և չտեսի նման չը զարմացաւ, այլ համեստ կերպով հարցրեց.

— Կարելի՞ է արդեօք իմանալ, թէ այդ պատիւն ինչո՞ւ համար է արել ինձ Թագաւորը:

— Մեր Թագաւորի որդին Վաչագանը քեզ տեսել է աղբիւրի մօտ. դու նրան ջուր ես տուել և նա քեզ շատ հաւանել է: Հիմա Թագաւորը մեզ ուղարկել է, որ քեզ նշանենք իր որդու հետ: Ահա այս մատանի է, այս ապարանջան, այս մանեակ, որանք կոճակներ են. մի խօսքով քեզ համար են այս ամենն էլ:

— Ուրեմն իմ տեսած որսորդը Թագաւորի որդին է եղել:

— Այո՛:

— Նա շատ լաւ երիտասարդ էր: Բայց արդեօք գիտէ՞ մի որ և իցէ արհեստ:

— Նա Թագաւորի որդի է, Անահիտ. նրան ինչ արհեստ է հարկաւոր. ողջ աշխարհի տէրը նա է, ամենքն էլ նրա ծառաներն են:

— Գիտեմ որ այդպէս է. բայց ով գիտէ, աշխարհ է, այսօրուայ ծառաների տէրը վաղը կարող է ինքը լինել ծառայ, թէև նա Թագաւոր էլ լինի եղած: Արհեստը մի այնպիսի բան է, որ ամեն մարդ պիտի գիտենայ, թէ ծառայ, թէ տէր, թէ Թագաւոր և թէ իշխան:

Այսպէս որ ասաց Անահիտը՝ իշխանները մնացին իրար երես մտիկ տալիս: Նայեցին Առանին, տեսան որ շատ հաւան է աղջկայ ասածին: Յետոյ դարձան Անահիտին ու կրկին հարցրին.

Համեստ կերպով — скромно.— Պատիւ է սրել — оказать честь.— Քեզ շատ հաւանել է — ты ему очень понравилась.— Ողջ աշխարհի տէրը — господинъ цѣлой, всей страны.— Լինի եղած — будущее описат.— еслибы даже онъ былъ (царемъ).— Իրար երես մտիկ տալիս (մնացին) — остались, переглядываясь другъ на друга.

—Ուրեմն դու Թագաւորի որդուն չպիտի ուղես միայն նրա համար, որ նա արհեստ չը գիտէ:

—Այո. և այս ամենը, ինչ որ բերել էք՝ յետ կը տանէք և կասէք, որ ես իրան շատ հաւանում եմ. միայն Թող ներէ ինձ, որ ես ուխտ եմ դրել՝ արհեստ չը գիտեցող մարդու չը գնալ: Եթէ կամենում է, որ ես իր ամուսինը լինեմ՝ Թող առաջ մի արհեստ սովորէ:

Իշխանները տեսան, որ Աննահիտը հաստատ է իր ասածին, էլ չստիպեցին: Նոյն գիշերը մնացին Առանի տանը: Աննահիտը նրանց լաւ հիւրասիրութիւն ցոյց տուեց: Միւս օրը վեր կացան գնացին և ինչ որ տեսել լսել էին՝ մի առ մի պատմեցին Թագաւորին:

Թագաւորն ու Թագուհին երբ լսեցին Աննահիտի վճիռը՝ շատ ուրախացան, կարծելով Թէ Վաչագանը չի ընդունի նրա առաջարկութիւնը և ձեռք կը վերցնէ նրանից. բայց երբ կանչեցին իրան և յայտնեցին՝ նա ասաց.

—Շատ ուղիղ է ասել Աննահիտը. ամեն մարդ պէտք է մի արհեստ գիտենայ. Թագաւորն էլ մարդ է, նա էլ պէտք է գիտենայ մի արհեստ:

Թագաւորը տեսաւ, որ որդին յօժար է մի արհեստ սովորելու, խորհրդի կանչեց իշխաններից մի քանիսին, և նրանք միաձայն վճռեցին, Թէ նրան վայելուչ արհեստը լաւ զինակ գործելն է, որ չկայ իրանց երկրի մէջ և հեռաւոր երկրներից են բերել տալիս շատ Թանգ գնով: Պարոիկ ուղարկեցին և խորին Պարսկաստանից մէկ հմուտ վարպետ բերել տուին Վաչագանի համար: Մի տարում Վաչագանն այնպէս սովորեց դիպակ գործելը, որ իր ձեռքով նուրբ ոսկեթե-

Յետ կը տանէք—отнесете назадъ, обратно.—Ուխտ եմ դրել—я дала обѣтъ поклялась.—Հիւրասիրութիւն ցոյց տուեց—оказала гостепріимство.—Ձեռք կը վերցնէ—откажется, отречется.—Խորհրդի կանչեց - позвалъ на совѣщаніе.—Մի քանիսին (իշխաններից)—нѣкоторыхъ (изъ князей).—Բերել տալ—выписать. - Թանգ գնով—по дорогой цѣнѣ.—Խորին Պարսկաստանից—изъ глубокой, отдаленной Персіи.

լից մի բաճկոնացու գործեց Աննահիտի համար և վաղինակի ձեռքով նրան ընծայ ուղարկեց:

Աննահիտը ստանալով այդ ընծան՝ ասաց. Չիմա ոչինչ չունեմ ասելու. յայտնեցէք Թագաւորի որդուն իմ յօժարութիւնը և իմ կողմից էլ իմ նոր գործած զոլգը ընծայ տարէք նրան:

Վաղինակը վեր առաւ զոլգը և ձին հեծնելով շտապեց դէպի Պարտաւ, որ մի լոպէ առաջ աւետէ Վաչագանին Աննահիտի յօժարութիւնը:

Սկսեցին հարսանիքի պատրաստութիւն տեսնել: Այդ հարսանիքը մի չը տեսնուած մեծ տօնակատարութեան պէս եղաւ բոլոր երկրի համար:

Далѣе (гл. 7) разсказывается о смерти родителей Вачагана и о возшествіи его на родительскій престолъ; при этомъ Анаг'итъ сдѣлалась его лучшей помощницей. Въ это время разнесся слухъ, что масса людей исчезаетъ и никто не знаетъ, куда они дѣваются. Не можетъ этого разъяснить и Вачаганъ, почему онъ по совѣту Анаг'итъ, переодѣвшись въ простого крестьянина, предпринимаетъ тайное путешествіе для изученія страны и ея нуждъ и для разъясненія этого страннаго явленія. (Между прочимъ исчезъ около гор. Пережа вѣрный слуга Вачагана Ваг'инакъ).

Ը.

Վաչագան Թագաւորը հասարակ շինականի հագուստով ծպտած՝ ճանապարհ ընկաւ դէպի իր երկրի հեռաւոր կողմերը: Շատ բան տեսաւ, շատ բան լսեց, բայց ամենից զարմանացաւ այն՝ ինչ որ տեսաւ իր վերադարձին Պերոժ քաղաքում:

Պերոժ քաղաքը, որ այժմ անհետացած է՝ գտնւում էր Կուր գետի ափին: Բնակիչները կռապաշտ պարսիկներ էին:

Վեր առաւ—взялъ, поднялъ.—Պատրաստութիւն տեսնել - готовиться.
Ճանապարհ ընկաւ—выступилъ въ путь.

կային և հայ քրիստոնեաները, բայց շատ սակաւ էին և չունէին ոչ քահանայ և ոչ աղօթատուն:

Քաղաքի կենտրոնումը կար մի շատ ընդարձակ հրապարակ, որ քաղաքի շուկան էր. նրա չորս կողմն էին գտնուում բոլոր արհեստաւորների և վաճառականների խանութները:

Մի օր այդ հրապարակում նստած էր Վաչագանը. մէկ էլ տեսաւ՝ ահա մի խումբ մարդիկ են գալիս և բերում իրանց հետ մի փառաւոր և սպիտակ մօրուքով ծերունի, աջ ու ձախ բազուկները բարձրացրած: Ծերունին շատ ծանր էր գալիս. նրա առջև սրբում էին ճանապարհը և աղիւսներ դնում ոտների տակին: Վաչագանը մօտեցաւ մի մարդու և հարցրեց, թէ ո՞վ է այդ ծերունին: Մարդը պատասխանեց.

—Սա մեր մեծ քրմապետն է, մի՞թէ չես ճանաչում: Տես, որքան սուրբ է, որ ոտը գետին չէ դնում, որ չը լինի թէ մի որ և իցէ միջատ ընկնի ոտքի տակ և սպանուի:

Հրապարակի ծայրում մի կապերտ փռեցին, և քրմապետը չոքեց նրա վրայ, որ Հանդստանայ: Վաչագանը դնաց նրա դիմացը կանգնեց, որ տեսնէ, թէ ինչ է խօսում այդ մարդը, կամ ինչ անում: Քրմապետը շատ սրատես էր. նա էլ Վաչագանի վրայ նայեց և նկատելով նրա օտարականը լինելը և առաջին անգամ իրան տեսնելը՝ ձեռով արեց, որ գնայ մօտը: Վաչագանը մօտեցաւ:

—Դու ո՞վ ես, ինչ գործ ես, հարցրեց քրմապետը:

—Ես մի օտար բանուոր եմ, պատասխանեց Վաչագանը, եկել եմ այս քաղաքը մշակութեան:

—Շատ լաւ, կը գաս ինձ հետ, ես քեզ գործ կը տամ և լաւ կը վարձատրեմ:

Չորս կողմը—съ четырехъ, со всѣхъ сторонъ.—Մի խումբ մարդիկ... գալիս են—согласованіе логическое: идетъ толпа людей.—Ծանր էր գալիս—шелъ медленно, поступалъ тяжело.—Ոտների տակին—подъ ногами.—Որքան—насколько.—Նրա օտարական լինելը—сокращенное придаточное предложеніе: что онъ чужестранецъ.—Ձեռով արեց—сдѣлалъ знакъ рукой.—Ի՞նչ գործ ես—какимъ дѣломъ, чѣмъ ты занимаешься?

Վաչագանը գլուխ տալով՝ յօժարութիւն յայտ տուեց և գնաց կանգնեց նրա հետ եղած մարդկանց մօտ:

Քրմապետն իր մօտ եղած քուրմերին մի քանի խօսք փըսփսաց, և նրանք ցրուեցին այս ու այն կողմն ու մի քանի րոպէից յետոյ վերադարձան այլևայլ պաշարներով՝ մշակների շալակը տուած:

Երբ որ բոլոր քուրմերն եկան՝ քրմապետը վեր կացաւ և մի և նոյն հանդիսով ճանապարհ ընկաւ դէպի իր բնակարանը: Վաչագանն էլ լուռ ու մունջ հետևեց նրան՝ աւելի հետաքրքրութիւնից շարժուած, որ տեսնէ, թէ ինչո՞վ են զբաղուած այդ քուրմերը, կամ ինչ մարդ է քրմապետը, ինչ բարեգործութիւններ է անում, որ այդպէս պաշտւում է: Այսպէս գնացին մինչև քաղաքի ծայրը:

Այդտեղ քրմապետը, օրհնելով ճանապարհ ձգող ջերմեռանդ կռապաշտներին՝ յետ դարձրեց. մնացին միայն իր քուրմերն և բեռնակիր մշակներն ու Վաչագանը: Դրանք շարունակեցին իրանց ճանապարհը և հեռանալով քաղաքից մօտ երկու վերստ՝ հասան մի պարսպապատ շէնքի և կանգ առան նրա երկաթէ դռան մօտ: Քրմապետն իր գրպանից հանեց մի ահագին բանալի, բաց արեց դուռն և ամենին ներս անելով՝ կրկին կողպեց: Այստեղ Վաչագանը մի անսովոր սարսուռ զգաց, տեսնելով՝ որ այստեղից իր կամքով դուրս գնալու հնար չի ունենայ: Վաչագանի հետ եղած մշակներն էլ առաջին անգամն էին մտում այս շէնքի մէջ: Նրանք ամենքն էլ իրար երես նայելով՝ սկսեցին փսփսալ, թէ ո՞ւր բերին նրանց այս մարդիկը: Վերջապէս պարսպի կամարակապ ճանա-

---

Յօժարութիւն յայտ տուեց—выразилъ согласіе.—Գլակը տալ—класть на спину, навьючить (ношу) на спину.—Վեր կացաւ—поднялся, всталъ.—Զարժուած (հետաքրքրութիւնից)—побуждаемый, волнуемый (любопытствомъ). Օրհնելով—благословляя.—Ճանապարհ գցել—провожать.—Մօտ երկու վերստ—около двухъ верстъ.—Ներս անել—вогнать.—Չնար չի ունենայ—не будетъ имѣть возможности.—Շէնքի մէջ—во внутрь строенія.—Իրար երես նայել—переглядываться.

պարհն անցնելուց յետոյ, նրանց առջև բացուեց մի շատ ընդարձակ հրապարակ, որի մէջ տեղը կար մի դմբեթով մեհեան, մանր խուցելով շրջապատուած: Պշակների բեւեռները ցած դնել տուին այդ խուցերի մօտ, և նրանց, Վաչագանի հետ միասին՝ քրմապետը տարաւ մեհեանի միւս կողմը: Այնտեղ բաց արեց մի նոր երկաթէ դուռ և ասաց.

—Գնացէք ներս, այդտեղ ձեզ գործ կը տան: Ներանք մոլորուածի պէս լուռ ու մունջ ներս մտան, և քրմապետն այդ դուռն էլ փակեց նրանց քամակից: Այստեղ մէր օտարականները նոր ուշքի եկան, նոր աչք բաց արին և տեսան, որ մի ստորերկրեայ ճանապարհի վրայ են կանգնած:

—Տղէք, ինչ տեղ ենք մենք, չէ գիտէք, հարցրեց Վաչագանը:

—Ես գիտեմ, որ մենք թակարդի մէջ ենք ընկել, էլ այս տեղից ազատուելու չենք, ասեց մէկը:

(Вачаганъ съ шестью рабочими входятъ въ какое то подземелье, гдѣ встрѣчаютъ какихъ то тощихъ, похожихъ на скелетъ людей. Они догадываются, что жрецы эти-колдуны; заманивъ къ себѣ людей, они запирали ихъ въ подземельи; знающихъ ремесло заставляли работать до смерти, а незнающихъ ремесла убивали и ихъ мясомъ кормили живыхъ рабочихъ. Между тѣнями-людьми Вачаганъ узналъ Ваг'инака, спасшагося отъ смерти благодаря знанію ремесла. Отъ него подробно узналъ Вачаганъ о жизни въ подземельи и сталъ придумывать способъ спасенія).

Թ.

Վաչագանի հետ եկածները թուով վեց հոգի էին: Հարցրեց նրանց, թէ արդեօք մի որ և իցէ արհեստ գիտէն: Մէկն ասեց, որ գիտէ կտաւ գործել, երկրորդը դերձակութիւն գիտէր, երրորդը մետաքսագործ էր. միւս երեքը ոչ մի արհեստ չէր գիտէին:

Մէջ տեղը—посрединѣ.—Ցած դնել տուին—велѣли сложить, снять (съ себя ношу).—Նրանց քամակից (փակուեց)—за ними (затворилась).—Ուշքի եկան—пришли въ себя.—Տղէք—ребята (народн. форма звat. множ. числа отъ слова տղայ): Թակարդի մէջ ընկնել—попасть въ ловушку.

—Վնաս չունի որ դուք արհեստ չէր գիտէք, ասեց Վաչագանը. ես կասեմ, որ դուք ամենքդ ինձ հետ արհեստակից էք, իսկ ես շատ լաւ արհեստ գիտեմ:

Ոտնաձայնը արձագանգ տալով՝ հետզհետէ մօտեցաւ, և նրանց առջև կանգնեց մի դաժանատեսիլ քուրմ, հետն առած մի խումբ զինուած մարդիկ:

—Պո՞ւք էք նոր եկածները, հարցրեց քուրմը:

—Այո, ծառաներդ ենք, պատասխանեց Վաչագանը:

—Ձեզնից ո՞վ է արհեստ իմանում.

—Մենք ամենքս էլ գիտենք, ասեց Վաչագանը.—գիտենք շատ թանկագին գիպակ գործել: Մեր գործուածքի մի կշիռը հարիւր կշիռ ոսկի կարժէ: Մենք մեծ գործարան ունէինք, բայց պատահմամբ կրակ ընկաւ, այրուեց, և մենք ընկանք պարտքի տակ ու խեղճացանք: Եկանք քաղաք, որ մի գործ գտնենք մեզ համար, հանդիպեցինք մեծ քրմապետին և նա մեզ բերեց այստեղ:

—Շատ լաւ. բայց միթէ ճշմարիտ այդչափ թանգ արժէ ձեր գործուածքը:

—Մեր ասածի մէջ սուտ չը կայ, չէ՞ որ պիտի ստուգէք:

—Իհարկէ ես շուտով կիմանամ, թէ որքան ճշմարիտ է ձեր ասածը. հիմա ասացէք, ինչ նիւթեղէն և գործիքներ են հարկաւոր, որ ես բերեմ:

Վաչագանը մի առ մի յայտնեց, թէ ինչ ու ինչ է հարկաւոր: Մի քանի ժամից յետոյ ամեն ինչ պատրաստ էր: Քուրմը պատուիրեց, որ երթան արհեստատունը, այնտեղ աշխատեն և նրանց հետ կերակրուեն:

—Այնտեղ մեր գործը լաւ չի յաջողուի, ասաց Վաչագանը: Մեզ հարկաւոր է ջոկ և ընդարձակ տեղ, և այս տեղը ա-

Հետն առած—взявъ съ собой.—Կրակ ընկաւ—попалъ огонь, случился пожаръ.—Պարտքի տակ ընկնել—впасть въ долги.—Արժէ—древняя форма наст. вр. (=արժում է) отъ արժել—стоить.—Մեր ասածի մէջ—въ сказанномъ нами, въ томъ, что мы сказали).

մենից յարմար է: Մեր դործի նրբութիւնը պահանջում է առատ լոյս. աղօտ լոյսի տակ մենք ոչինչ չենք կարողանայ կատարել: Իսկ ինչ վերաբերում է մեր կեդակրին՝ պէտք է դիտենաք, որ մենք մսակեր չենք, սովոր չենք այդ կերակրին. Հէնց որ միս ուտենք՝ իսկոյն կը մեռնենք, և դուք կը ղբկուէք այն մեծ օդուտից, որ մեզնից կարող էք ստանալ: Ճշմարիտն եմ ասում, որ մեր դործի մի քաշը հարիւր քաշ ոսկի կարժէ...

— Շատ լաւ, ասեց քուրմը, ես ձեզ համար կուղարկեմ հաց և բուսեղէն կերակուր. դուք կունենաք և առատ լոյս. բայց եթէ ձեր դործն այնպէս չը լինի, ինչպէս խոստանում էք՝ ես ձեզ ամենիդ սպանդանոց կուղարկեմ և սպանելուց առաջ ենթարկել կը տամ չարաչար տանջանքների:

— Մեր ասածի մէջ ոչինչ սուտ չը կայ. եթէ ուղում էք մեր խոստացած շահն ստանալ՝ պէտք է միայն կատարէք մեր ուղածը:

Քուրմը կատարեց իր խոստումը: Նրանց համար ուղարկում էր սպիտակ հաց, կանաչեղէն, կաթ, մածուն, պանիր և զանազան չոր ու թարմ մրգեր: Վաղինակն էլ մասնակցեց նրանց, և սնունդի ազդեցութիւնով կազդուրուեց ու կենդանի մարդու կերպարանք առաւ: Վաչագանն սկսեց իր դործն և իր ընկերներին էլ օդնական շինեց: Կարճ միջոցում պատրաստեց մի կտոր շատ պատուական դիպակ այնպիսի նախշերով, որոնց եթէ ուշադրութեամբ դննէին և իմանային նրանց խորհուրդը՝ նոյն դժոխքի պատմութիւնը պիտի կարդային նրանց մէջ:

Քուրմն եկաւ, տեսաւ պատրաստած դիպակն և մնաց հիացած: Վաչագանը ծալելով իր դործքը ինչպէս պէտք էր և յանձնելով քուրմին՝ ասեց.

— Ես առաջ ասեցի, որ մեր դործուածքի մի կշիռը հա-

Աղօտ լոյսի տակ — при слабомъ свѣтѣ.— Կարճ միջոցում — въ короткое время.

րիւր կշիռ ոսկի կարժէ. բայց հիմա հարկաւոր եմ համարում ասել, որ սա իմ ասածի կրկնապատիկը կարժէ, որովհետև սրա վրայ կան այնպիսի թալիսմաններ, որ հաղնողին միշտ դուարթ և ուրախ կը պահեն: Այս կայ միայն, որ հասարակ մարդիկ սրա գինը չեն իմանայ: Սրա գինը կիմանայ միայն Անահիտ Թագուհին, և բացի նրանից ոչ ոք չի էլ համարձակի հագնել մի այսպիսի թանդագին դործուածք:

Արծաթամոլ քուրմն աչքերը չորս բաց արեց, երբ որ իմացաւ դիպակի իսկական արժէքը: Այս մասին նա խոբամանկ քրմապետին ոչինչ չը յայտնեց և մինչև անդամ ցոյց չը տուեց նրան: Ուղեց որ Թագուհու տեսութեանը միայն ինքն արժանանայ և նրանից առած աւելի ոսկիներն ինքը վայելէ..

Ժ.

Անահիտը Վաչագանի բացակայութեան ժամանակ լաւ էր կառավարում երկիրն և ամենքն էլ գոհ էին, առանց իմանալու՝ թէ նա է կառավարողը. բայց ինքը սաստիկ մտատանջութեան մէջ էր ընկել. քսան օրից արդէն տասն օր էլ անցել էր, բայց Թագաւորը չէր վերադարձել: Նա գիշերը հանդիստ չունէր. սարսափելի երազներ էր տեսնում և յանկարծ վեր թռչում: Ամեն բան վոխուել էր նրա աչքում և ամեն ինչ մի անսովոր յատկութիւն ստացել:

Մէկ առաւօտ էլ Անահիտը սաստիկ սրտնեղած՝ մանէր գալիս պարտէզում. ծառաներից մէկը ներս եկաւ և յայտնեց նրան, թէ մի օտար վաճառական է եկել և ասում է, որ մի երևելի բան ունի վաճառելու Թագուհուն: Անահիտի սիրտն սկսեց մի անսովոր կերպով տրոփել: Չիմացաւ որ շուտով ներս բերեն այն մարդուն:

Այս կայ միայն — дѣло въ томъ.— Աչքերը չորս բաց արեց — вытаращилъ глаза.— Քսան օրից... անցել էր — сверхъ двадцати дней... прошло.— Վեր թռչել — вскакивать, вскочить.

Ներս եկաւ մի դաժան կերպարանքով մարդ, խօր գլուխ տուեց թագուհուն և արծաթէ սինու վրայ դրած մի ոսկէ դիպակ դրեց նրա առջև: Անահիտը վեր առաւ, դննեց դիպակը և ուշ չը դարձնելով նախշերի վրայ՝ հարցրեց դինը:

—Իր կշռովն երեք հարիւր կշիռ ոսկի արժէ, ողորմած թագուհի. ուղում եմ ասել, որ ինձ վրայ այդքան է նստել միայն գործքն ու նիւթը. իսկ աշխատանքն էլ թողնում եմ քո ողորմածութեան կամքին:

—Մի՛թէ այդքան թանգ արժէ:

—Ողջ լինի թագուհին, դրա մէջ կայ մի այնպիսի զօրութիւն, որ անդնահատելի է: Դրա վրայ եղած նկարները հասարակ նախշեր չեն, այլ թալիսմաններ են. իսկ այդ թալիսմաններն այն զօրութիւնն ունին, որ դրա հագնողին միշտ զուարթ, միշտ ուրախ կը պահեն: Դրա հագնողը կեանքի մէջ տխրութիւն չի տեսնի:

—Մի՛թէ այդպէս է, ասեց Անահիտն ու սկսեց բաց անել դիպակն և ուշի ուշով զննել նրա նկարները, որոնք ոչ թէ թալիսմաններ, այլ ծաղկագրեր էին: Անահիտը լուռ ու մունջ կարդաց նրանց մէջ հետևեալ խօսքերը.

«Իմ աննման Անահիտ, ես ընկել եմ մի սոսկալի դժոխքի մէջ: Այս դիպակ բերողը նոյն դժոխքի վերակացուներից մէկն է: Ինձ մօտ է և վաղինակը: Դժոխքը գտնւում է Պերոժ քաղաքից դէպի արևելք մի պարսպապատ մեհեանի յատակում: Եթէ շուտ օգնութեան չը հասնես՝ մենք կորած ենք յաւիտեան:

«Վաչագան»

—Ուշ չը դարձնելով—не обращая вниманія.—Իր կշռով 300 կշիռ աւելի—въ 300 разъ болѣе своего вѣса.—Ինձ վրայ է նստել—мнѣ обошлось, мнѣ стоитъ.—Աշխատանքը—выручка, барышъ.—Ողջ լինի—да здравствуетъ.—Օգնութեան չը հասնես—не поспѣшишь на помощь.

Անահիտը մէկ անգամ կարդալով չը բաւականացաւ. երկրորդ և երրորդ անգամ էլ կարդաց, որովհետև իր աչքերին չէր հաւատում. կարդաց և չորրորդ անգամ, միայն այս անգամ ոչ թէ կարդում էր իսկապէս, այլ մտածում էր, թէ ինչ անելու է:

Продавецъ ткани отказался указать, какой мастеръ, гдѣ и какъ соткалъ дорогую матерію; почему Анаг'итъ приказываетъ заключить его въ тюрьму, а сама приготовляется къ освобожденію Вачагана и его товарищей.

ԺԲ.

Անահիտն երբ որ բանդարկեց ծպտած քուրմին՝ իսկոյն փչել տուեց պատերազմական փողերը: Հազին փողերի այդ յանկարծական որոտալը յայտնի նշան էր, որ մի մեծ վտանգ է պատահել աշխարհին: Մի ժամ չանցած՝ բոլոր քաղաքացիք թափուեցին պալատի առջև: Ոչ ոք չէր իմանում, թէ ինչ է պատահել. ամենքը շնչասպառ միմեանց էին հարցնում և ոչ մէկից մի որոշ պատասխան չէին ստանում: Յանկարծ պատշգամի վրայ երևաց Անահիտը, ուից մինչև գլուխ սպառազինուած, և դէպի ժողովուրդը դառնալով՝ այսպէս խօսեց.

«Ձեր թագաւորի կեանքը վտանգի մէջ է: Այս րոպէիս իմացայ, թէ ինչ տեղ է ընկել: Նա գնացել էր իր երկրի մէջ պտտելու, որ ժողովրդի կրիւքն ու հոգսերը իր աչքով տեսնէ: Ձար մարդկանց է հանդիպել և ընկել է մի տարտարոսի մէջ: Էլ ուրիշ բան չունեմ յայտնելու ձեզ առայժմ: Ժամանակ չը պէտք է կորցնել. ով որ սիրում է իր թագաւորին, ում համար թանգ է նրա կեանքը՝ շուտով ձիաւորուի և գայ իմ ետևիցս: Մենք պէտք է կէս օր չեզած հասնենք Պերոժ քաղաքը: Ես արդէն պատրաստ եմ և ձեզ եմ սպասում: Դէհ, գնացէք և շուտով պատրաստուեցէք»:

Փչել տուեց—велѣла трубить.—Իմ ետևից—за мной.

Մի ակնթարթի մէջ ցրուեց ժողովուրդը գոչելով, «կեցցէ Թագաւորը, կեցցէ Թագուհին», և մի ժամ չանցած՝ արդէն ամենքը զինուած պատրաստ էին: Քաջասիրտ օրիորդներն ու տիկիններն էլ երբ որ իմացան, թէ Թագուհին պիտի առաջնորդէ զօրքին՝ նմանապէս զրահաւորուեցին ու ձիաւորուելով շրջապատեցին Թագուհուն:

Մի կատարեալ հիացք էր Անահիտը սպարապետի զգեստի մէջ: Կրակոտ ձիու վրայ նստած, ոսկեզօծ զրահով պատած, մազերը սաղաւարտի մէջ ամփոփած, լայնաշեղբ թուրը կապած, վահանը թիկունքից կախած: Այս բոլորը նրա արեգնատիպ դէմքի և հրավառ աչքերի հետ մի ահեղ կերպարանք էին տուել նրան:

Երբ քաղաքացիք դուրս եկան տափարակ դաշտը՝ Անահիտը դարձրեց ձիու գլուխը և այս ու այն կողմը քշելով՝ հրամաններ արձակեց. մի քանի րոպէի մէջ կարգաւորելով ամբողջ այրուձին՝ գոչեց բարձրաձայն «առա՛ջ», և ինքն առաջ անցնելով ասպանդակեց ձիուն և մի վայրկեանի մէջ աներևութացաւ: Հեռուից երևում էր միայն ձիու բարձրացրած թանձր փոշին, որ ամպի պէս մինչև երկինք էր հասնում: Երկու ժամից յետոյ նա իր հրեղէն ձիով մենակ կանգնած էր Պերոժ քաղաքի հրապարակի մէջ: Կառապետ քաղաքացիք նրան երկնքից իջած մի նոր աստուած համարելով՝ խուռն բազմութիւնով չոգեցին նրա առջև և գլուխները մինչև գետին կորացրին:

— Ո՞ւր է ձեր քաղաքապետը, գոչեց Անահիտը սպառնալից ձայնով:

Ժունկ չոգածներից մէկը վեր կացաւ և դողդողալով ասեց.

— Ծառադ եմ այստեղի քաղաքապետը:

Մի ժամ չանցած—не прошло и часа.—Արեգնատիպ—свѣтозарный (какъ солнце).—Հրամաններ արձակեց—послала приказы.—Ինքն առաջ անցնելով—сама, выступивъ впередъ.—Երկնքից իջած—сошедшій съ неба.—Ծառադ եմ—я слуга твой (самоуничижит. выраженіе).

— Դու ես ուրեմն, որ այնքան անհոգ ես և չը գիտես, թէ ինչ է գործւում քո աստուածների բնակարանում:

— Ծառադ եմ, ես ոչինչ չը գիտեմ:

— Դու գուցէ չը գիտես էլ, թէ հրեղէն է գտնւում ձեր տաճարը:

— Ի՞նչպէս չը գիտեմ, ծառադ եմ, շատ լաւ գիտեմ:

— Առա՛ջ անցիր ուրեմն:

Կէս ժամ չանցած՝ ամբողջ քաղաքը գլխուած գնում էր Անահիտի ետևից: Երբ որ մօտեցան մեհեանի պարիսպներին՝ քուրմերը կարծեցին, թէ ուխտաւորների մեծ բազմութիւն է եկողը, շտապով բաց արին դուռը: Բայց երբ ներս խըռնուեց ժողովուրդը, երբ տեսան զրահաւորուած աստեղի սպառնալից դէմքն և իրանց վրայ ուշք չը դարձնելը՝ մի անսովոր սարսափի մէջ ընկան: Անահիտը մի րոպէի մէջ գտաւ տարտարոսի դուռն և դառնալով քաղաքապետին՝ հրամայեց.

— Բա՛ց արէք ահա այս դուռը:

Մինչդեռ քաղաքապետի հրամանով մի քանի անձինք պատրաստւում էին կոտրատել դուռը՝ ծերունի քրմապետը, վերահաս վտանգը տեսնելով, դուրս եկաւ իր մեհենական զգեստով, որ ժողովրդի վրայ սարսափ ձգէ և յետ մղէ: Երբ որ իր սպիտակ շուրջառը ձգած, քրմապետական երկճիւղ երկայն թագը գլխին դրած և գաւազանը ձեռին դուրս եկաւ ուռած ու փքուած՝ ժողովուրդը ճանապարհ բաց արեց և յետ քաշուեց ահ ու դողով: Նա մօտեցաւ Անահիտին և պատգամախօսի ձայնով աղաղակեց.

— Ի՞նչ ես ուզում, ի՞նչ ես անում, յե՛տ քաշուիր այդ տեղից:

Անահիտը, բարկութիւնը հազիւ զսպելով՝ ասեց.

Առա՛ջ անցիր—ступай въ передъ!—Ներս խռնուեց—ворвалась, втолкалась (толпа) во внутрь.—Հրամանով—по приказанію.—Մի քանի անձինք—нѣсколько человѣкъ.—Սարսափ ձգել—нагнать страхъ, панику.—Գլխին դրած (թագը)—надѣвъ на голову (тіару).—Ուռած ու փքուած—надувшись, пышно, горделиво.—Ահ ու դողով—съ страхомъ и трепетомъ.

—Ես հրամայում եմ, որ այս դուռը բացուի:

—Ո՛վ է կարող հրամայել այստեղ, բացի ինձանից: Այս դուռը մեր սրբարանի դռւռն է. այստե՛ղ է գտնւում մեր նախնիների փոշին, այստեղ է մեր անշէջ կրակարանը. տեսէ՛ք ահա այն ծուխը, որ մինչև երկի՛նք է բարձրանում: Աստուածների բարկութիւնը մի՛ շարժէ՛ք: Յրուեցէ՛ք, հեռացէ՛ք, կորի՛ք. ինչպէս էք համարձակւում ձեր պիղծ ոտքերով կոխոտել այս սուրբը վայրը...

Քրմապետի ահեղագոչ սպառնալիքը սնապաշտ ժողովրդի վրայ սարսափ բերեց, ամենքը կորագլուխ յետ քաշուեցան. բայց նրանց մէջ կային և քրիստոնեաներ, որոնք պիղծ կանդնեցին իրանց տեղերը, կասկածելով, որ այդ ծածկարանում մի սարսափելի գաղտնիք պիտի լինի թագնուած: Նրանք միաբերան գոչեցին.

—Թող բացուի՛, բացուի՛ այդ տարտարոսի դուռը:

Քրմապետը տեսաւ, որ իր հրամանին ընդդիմացողներ կան. երեսը դարձրեց դէպի մեհեանն և ձեռքերը մեկնելով՝ աղաղակեց.

—Ո՛վ հզօր աստուածնե՛ր, ձեր սուրբ տաճարը պղծւում է, օգնութի՛ւն հասցրէ՛ք:

Այս ձայնի վրայ մեհեանի դուռը բացուեց և նրա միջից դուրս թափուեցին մի խումբ սպառազինուած դաժանատեսիլ մարդիկ: Սրանք քուրմեր էին, որոնք վերահաս վտանգը տեսնելով՝ անձնապաշտպանութեան էին պատրաստուել: Քրմապետը հրամայեց նրանց, որ դուռը պահպանեն և ոչ ոքի թոյլ չտան մօտենալ:

Անահիտի համբերութիւնը հատաւ սաստիկ բարկութիւնից: Պարձրեց ձիու գլուխն և յետ նայելով՝ տեսաւ, որ քաղաքի վրայ ամպի պէս փոշի է բարձրացել. հասկացաւ, որ զօրքը մօտեցել է: Այդ հանգամանքից աւելի ևս սրտապնդուելով՝

Բարկութիւնը շարժել—возбудить гнѣвъ.—Կորի՛ք (нач. կորչել)—пропадите, убирайтесь.—Օգնութի՛ւն հասցրէ՛ք—окажите помощь, поспѣшите на помощь.—Յետ նայելով—посмотрѣвъ назадъ, обернувшись.

Անահիտը ձախ ձեռքն առաւ վահանը և աջով սուրը հանելով՝ դարձաւ դէպի քուրմերն և գոչեց.

—Վերջին անգամ հրամայում եմ ձեզ զինաթափ լինել և բանալ այդ դժոխքի դուռը:

Քուրմերը պատրաստուեցին դիմադրելու: Անահիտի ձին մի թեթև ասպանդակի հարուած ստանալուն պէս՝ կոխկռտեց պառաւ քրմապետին, յարձակուեց մեւս քուրմերի վրայ և սկսեց կոտորել: Քուրմերը նրան շրջապատեցին և վիրաւորեցին ձիուն: Անահիտը պաշտպանողական դիրք բռնեց: Այդ որ նկատեցին քրիստոնեաները՝ քուրմերի վրայ յարձակուեցին: Քուրմերը շփոթուեցին: Կռապաշտները տեսան, որ քրիստոնեաներն օգնում են Անահիտին, կարծեցին, թէ կռիւը կրօնական է, իսկոյն անցան քուրմերի կողմն և սկսեցին քարէկարկուտ թափել քրիստոնեաների վրայ: Այդ միջոցին Անահիտի սպառաւարտը վայր ընկաւ մի քարի հարուածից, որ դիպաւ նրա ձայրին: Նրա խիտ և երկայն մազերը փռուեցին և ծածկեցին ամբողջ կազմուածքն ամեն կողմից, բացի հրացայտ աչքերից: Նրա այդ տեսքը մի նոր սարսափ ձգեց ամբոխի վրայ, որոնք իրանց քարէ կարկուտն իսկոյն դադարեցրին: Անահիտը մի անգամ էլ յարձակուեց քուրմերի վրայ և մի քանիսին մահացու վէրք տալով՝ գետին գլորեց: Հէնց այդ ժամանակ վրայ հասան զօրքի առաջապահ նիզակաւորներն օրիորդների և տիկինների հետ և իրանց թագուհուն տաք կռւի մէջ տեսնելով՝ միաձայն աղաղակեցին և յարձակուեցին քուրմերի վրայ: Մի րոպէ չանցած՝ կենդանի մնացած քուրմերը փախան. ամբոխը յետ քաշուեց և բաց հրապարակի վրայ մնաց Անահիտը, շրջապատուած քաջասիրտ օրիորդներով ու տիկիններով: Քրիստոնեաներից մէկը բերեց նրա սպառաւարտը, որ ազատել էր ամբոխի ձեռից: Անահիտը ողջ առողջ իջաւ ձիուցը,

Սուրը հանելով—обнаживъ саблю.—Քարէ կարկուտ թափել—посыпать градомъ камни.—Վէրք տալ—нанести рану.—Յետ քաշուել отступить.—Իջաւ ձիուց—слѣзла съ лошади.

կարգի բերեց մազերը — поправила свои волосы. — Ներսից — изъ внутри. Սիրտը կտրատել, тронуть, раздирать душу. — Ինչ կայ էր կայ — все что ни есть. — Ջարդ ու փշուր անել — разбить въ дребезги. Մնացած անելիքը — остальное, что нужно дѣлать.

Գրկերն առած — взявъ на руки. — Մինչև անգամ — даже. — Գիւղից գիւղ — изъ села въ село, по всѣмъ селеніямъ. — Մեզ չեն հասել — до насъ не дошли.

լել են Վաչագանն ու Անահիտը իրանց աշխարհի համար՝ այդ հէքիաթի ձևով պատմում են մինչև այսօր էլ: Այդ հէքիաթի գլխաւոր միտքն այն է, որ «Թագաւորի կեանքը արհեստն է փրկել»: Այս լաւ միտք է, և ինչ ժողովրդի մէջ որ գտնւում է մի այսպիսի սրբացած աւանդութիւն՝ դա ցոյց է տալիս, թէ ուրեմն այն ժողովուրդը մեծ նշանակութիւն է տալիս արհեստներին, աշխատասիրութեանը, որից գլխաւորապէս կախուած է ժողովրդի բախտաւորութիւնը:

հէքիաթի ձևով—въ формѣ сказки.—նշանակութիւն տալ—придать значеніе.

Աբգար,-ի, Абгаръ.
ագռաւ,-ի, воронъ,-на.
ազատ, свободный;-но.
ազատել, освободить, избавить.
ազատուել, освободиться, избавиться.
ազատութիւն, свобода.
ազգ,-ի, нація, народъ.
ազգութիւն, народность, нація.
ազդել, вліять, дѣйствовать.
ազդեցութիւն, вліяніе.
ազնուականուհի, дворянка.
ալիք,-ի, волна.
ա՛խ, ахъ! охъ!
ախոռ,-ի, конюшня.
ախտացած, подверженный недугу, больной.
ածել, лить, наливать.
ականատես, очевидецъ.
ականջ,-ի, ухо.
ակնապիշ, изумленный.
ակնթարթ,-ի, мигъ.
ահ,-ի, страхъ, боязнь.
ահա, вотъ.
ահագին, огромный.
ահեղ, грозный.
ահեղագոչ, страшно ревущій.
աղաղակել, завопить, молвить.
աղաչել, молить, умолять.
աղբանոց,-ի, навозная куча.
աղբիւր,-ի, родникъ.
աղեղ,-ի, лукъ.
աղի, соленый.
աղիւս,-ի, кирпичъ.
աղմուկ,-ի, шумъ.
աղջիկ,-ջկայ, дѣвушка.
աղքատիկ, бѣдненькій, скромный.
աղօթատուն,-տան, молитвенный домъ.
աղօթել, молиться.
աղօթք,-ի, молитва.
աղօտ, слабый.
աճել, расти.
ամայի, пустынный.
ամառ,-ի и-ուայ, лѣто.
ամառանոց, ամարանոց-ի, лѣтняя резиденція, дача.
ամեն, всякій;—մէկը, каждый; այն—նը, все то.
ամենևին, вовсе, нисколько, совсѣмъ.
ամիս, ամսի, мѣсяцъ.
ամբոխ,-ի, толпа.
ամբողջ, весь, цѣлый.
ամուսին,-նի, супругъ, -га.
ամուսնանալ, вступить въ супружество, въ бракъ.
ամուր, крѣпкій, прочный.
ամպ,-ի, туча, облако.
ամփոփել, собрать, помѣщать.
ամօթ,-ի, стыдъ, позоръ.
ամօթահարուել, устыдиться.
այգեկութ,-ի, уборка сада.
այգի, фруктовый садъ.

այդ, тотъ, та, то.
այդպէս, такъ.
այդպիսի, такой.
այդքան, столь; такъ.
այժմ, теперь.
այժմեան, теперешній.
այլևայլ, разнообразный.
այլևս, болѣе, далѣе.
այն, тотъ, та, то.
այնպէս, такъ.
այնուհետև, послѣ того.
այնտեղ, тамъ; туда.
այնքան, столь, столько.
այս, этотъ, а, о.
այսուհետև—послѣ этого.
այսպէս, итакъ, такимъ образомъ.
այստեղ, здѣсь, тутъ.
այստեղի, здѣшній.
այսօր, сегодня.
այրել, жечь.
այրուել, сгорѣть.
այրուձի, конница.
այցելել, посѣщать,
անագորոյն, жестокій
Անակ,-ի, Анакъ.
անակնկալ, непредвиденный.
Անահիտ,-ի, Анаг'итъ (богиня).
Աննանէ,-ի, Ананэ.
անապատ,-ի, пустыня.
անասուն,-սնի, скотъ, животное.
անբնակ, необитаемый, ненаселенный.
անգամ, разъ; даже.
անգէտ, неучъ, невѣжа.
անգնահատելի, неоцѣнимый.
անգութ, безжалостный.
անդադար, безпрестанно.
անել, дѣлать.
անելիք,-ի, подлежащій исполненію; дѣло.
աներկիւղ, безбоязненный,-нно.
աներեւութանալ, исчезнуть.
անթիւ, безчисленный.
անիծեալ, проклятый.
անիւ, колесо.
անխտիր, безразличный;-но.
անծանօթ, незнакомый.
անկենդան, безжизненный;-но.
անկործան, несокрушимый;-мо.
անկուշտ, ненасытный.
անհամբեր, нетерпѣливый;-во.
անհանգիստ, неспокойный.
անհետ, безслѣдный;-но;—անել, уничтожить (безъ слѣда).
անհետանալ, исчезнуть.
անհիւրընկալ, негостепріимный.
անհոգ, безпечный;-но.
անձ,-ի, лицо, персона.
անձամբ, лично.
անձնապաշտպանութիւն, самосохраненіе.
անձրեւ,-ի, дождь.
անմեղ, невинный.
անմիջական, непосредственный.
անմռունչ, безропотный, нѣмой.
աննման, безподобный.
աննշան, незначительный.
անողորմ, неумолимый.
Անույշ,-ի, Ануйшъ.
անուն,-ի и-ուան, имя.
անուշ, сладкій; -անել, вкушать, услаждаться.
անշէջ, неугасаемый.
անշնորհք, неуклюжій.

անշուշտ, непремѣнно; по всей вѣроятности.
անչափ, чрезмѣрный;-но.
անպատճառ, непремѣнно.
անպարտելի, непобѣдимый.
անպիտան, негодный.
անջատուել, разлучиться.
անսովոր, непривычный.
անվնաս, невредимый;-мо.
անտառ,-ի, лѣсъ.
անտուժելի, нестерпимый.
անտրտունջ, безропотный;-но.
անցեալ, прошедшій, прошлый.
անցնել, проходить, перейти.
անց.ք,-ի происшествіе.
աշակերտ,-ի, ученикъ.
աշխատանք,-ի, трудъ; заработокъ; барышъ.
աշխատասիրութիւն, трудолюбіе.
աշխատել, стараться; работать.
աշխարհ,-ի, міръ, свѣтъ; страна.
Աշխէնն,-ի, Ашхэнъ.
աշնանացան.ք,-ի, осенній посѣвъ; озимъ.
աշուղ,-ի, ашугъ (пѣвецъ на востокѣ).
աշտարակ,-ի, башня.
աչք,-ի, глазъ.
ապա, потомъ.
ապագայ, послѣдующій, грядущій, будущій.
ապակեայ, стекляный.
ապահովել, обезопасить.
ապահովուել, обезопаситься.
ապառաժ,-ի, скала.
ապաստանել, найти убѣжище.
ապարանջան, браслетъ.
ապարանք,-ի, хоромы.
ապաւինել, уповать.
ապշեցնել, обезумить; очаровать.
